

5586

№ 17

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵՂԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 17

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

Վ. Ա. ԿԱՐՊԻՆՍԿԻՑ

ԻՆՉ Է ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՃԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԻՆՉՊԵՍ Է ՆԱ ԿԱԶՄԻՈՒՄ

ԳԻՆՆ Է Ց ՐՈՒՐ.

Карпинский, „Что такое Советская Власть и как она строится“

321.8

4-36

6604

6604X3

№ 17

ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

№ 17

321.8

Պրոլետարներ բոլոր երկրները, միացե՛ք!

4-36 ւճ

Վ. Ա. ԿԱՐՊԻՆՍԿԻՑ

ԻՆՉ Է ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՃԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԻՆՉՊԷՍ Է ՆԱ ԿԱԶՄԻՈՒՄ

1006
29588

Карпинский, „Что такое Советская Власть и как оно строится“

2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԿԱՆ ԿՐԻՄԱՆՈՒՅԻ
ՄՈՍԿՎԱ—1919

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Խորհուրդների շինարարութիւնը բազմաթիւ միանգամայն նոր հարցեր է առաջ բերել, հարցեր՝ որոնք նախատեսւած չեն ոչ տեսականօրէն, ոչ գործնականօրէն:

Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը մշակելու վրայ է: Բայց կեանքը չէ սպասում: Նա առաջ է սլանում աւելի արագ, քան երբ և իցէ, ստիպողականօրէն պահանջելով իր պահանջների շուտափոյթ զօհացումը:

Ընթերցողի ուշադրութեանն առաջարկւող սոյն զրքոյկում մենք փորձել ենք մեր ոյժի ներածի չափ պատասխան տալ Խորհուրդների շինարարութեան ընթացքում ծագած հարցերին, լինելով մեր անձնական փորձի և այն հարուստ նիւթի վրայ, որ ամեն կողմից թափուծ է ներքին գործերի Կենտրոնական Կոմիսարիատը:

Մենք մեր նպատակին հասած կը համարէինք մեզ, եթէ մեր աշխատութիւնը Խորհուրդների աշխատակիցների համար իբրև մի տեսակ ձեռնարկ ծառայէր, մինչև որ այստեղ քննութեան առնւած հարցերն իրանց լուծումը կստանան հանրապետութեան բարձրագոյն օրէնսդրական հաստատութեան մէջ:

2001

20001

Մեր գրքոյկի առաջին հրատարակումիւնը, որ, ի դէպ ասենք, Թարգմանած է գերմաներէն, շուտով սպառուեց 200,000 օրինակ քանակութեամբ:

Այն ինչ նրա ամենաուժեղ պահանջը դեռ կայ: Հարկ եղաւ ինձ Երկրորդ հրատարակումիւնը մենակ պատրաստել տպագրութեան համար, որովհետեւ հեղինակակիցս, ընկեր Մ. Եա. Լացիսը, կոչւած է պատասխանատու պաշտօնի՝ հակա-լեղափոխականութեան դէմ պայքարելու գործում:

Խորհուրդների Հանրապետութեան սահմանադրութիւնն այժմ մշակւած է և ընդունւած Համայն Ռուսաստանի Խորհուրդների 5 րդ համագումարի կողմից: Ուստի Խորհուրդային Իշխանութեան կազմութեան մեր առաջարկած յատակագծում ես համապատասխան փոփոխութիւններ մտցրի՝ Սահմանադրութեան համաձայն՝ մատնանիշ անելով նրա առանձին յօդածները:

Բացի դրանից՝ մի նոր գլուխ է աւելացրած (Երրորդը), «Ի՞նչ է Խորհուրդների Հանրապետութիւնը», և մի քանի լրացումներ են արւած համաձայն Նահանգական Գործադիր Կոմիտէների Նախագահների 1-ին Համագումարի որոշումներին և ներքին գործերի Կենտրոնական Կոմիտեի սարխատի հրահանգներին:

Մեր գրքոյքն իւր այդ ձևովը կարող է իբրև մեկնաբանութիւն ծառայել Սահմանադրութեան համար: Իսկ որ չափով վերջինը չէ շօշափում Խորհուրդների շինարարութեան վերաբերող բազմամիւ մասնաւոր հարցեր, մեր աշխատութիւնը, լուտով եմ, կը պահէ՝ Խորհրդային գործիչների համար՝ նաև իր այն նշանակութիւնը, որի մասին հեղինակները լիշեցրել են առաջին ապագրութեան առաջաբանի մէջ:

Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՑ

Մոսկա. 22 յուլիսի 1918 թ.

1. Ի՞նչ է՞ր ՅԱՐԻ, ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԵՒ ՀՍՄԱԶԱՅՆՈՂԱ-ԿԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Մենք բոլորս էլ դեռ լաւ ենք յիշում ցարի իշխանութիւնը—կալաժատէրերի իշխանութիւնը Նիկոլայ II-ի գլխաւորութեամբ:

Այդ իշխանութիւնը նրանում էր կայանում, որ մի բուռը սակաւութիւ կալաժատէրեր երկաթի կապանքների մէջ բռնած պահում էին տասնեակ միլիոնաւոր աշխատաւոր ժողովուրդը և ստիպում նրան իբրանց համար աշխատել, չարչարել և մեռնել: Այդ իշխանութեան համար աշխատաւոր ժողովուրդը միայն մի գորշ տաւար էր, որ պէտք էր աշխատանքի համար և իբրև թնդանօթային միս:

Ժողովուրդն ստրկութեան մէջ պահելու և նրա մտքի արթնանալուն արգելք դնելու համար՝ ցարի իշխանութիւնը պրկում էր նրան անխնայօրէն, դպրոցների փոխանակ դիւնետներ էր շինել տալիս, իսկ հաւաքւել նա թոյլ էր տալիս միայն եկեղեցում և զինետանը:

Եկեղեցիներում՝ կիրակիները՝ տէրաւոր ժողովրդի զլխին համբերութեան խրատ էր կարգում, որպէս զի լուր օրերի տէրն աւելի արձակ-համարձակ հեծնէ նրան ու բշէ: Գինետներում արբեցնում էին ժողովուրդը, որպէս զի նա, դարդից աչք բաց չանի ու չհասկանայ թէ ո՞րտեղ է չարիքի արմատը: Իսկ եթէ նա այնու ամենայնիւ սկսում էր ապրտամբւել, դրա դէմ էլ հօ ուրեաղնիկ կար, ստանափօջ կար:

պահանքներ, կազաններ կային, և հենց նոյն իսկ իւր խաւարամիտ եղբայր-ղինւորը կար, որին կազարմայում կոյր գործիք էին շինել սպալի ձեռքին:

Անսահման վիշտ ու չքաւորութիւն՝ միլիոնաւոր մարդկանց. խնջոյքներ ու պալատներ՝ մի բուռը հարուստներին. մշտապէս աշխատանք և կիսաքաղց վիճակ՝ ահազին մեծամասնութեան. պարապութիւն և որկրամոլութիւն՝ չնչին փոքրամասնութեան—ահա՛ թէ ինչ էր ցարի իշխանութիւնը:

Բայց ժողովուրդն աչքը բաց արեց վերջապէս: Թափ աւեց իւր հուժիու ուսերը և վրայից վայր նետեց ցարի վոհմակը, օտնակոխ անելով նրան:

1917 թ. փետրւարին էր այդ: Բայց հազիւ ժողովուրդը իր շուրջը նայելու ժամանակ ունեցաւ, երբ նրա վրին մի ուրիշը նստեց՝ գործարանատէրը իրա եղբոր՝ ուսեալ կալածատիրոջ հետ. Նիկոլայի տեղ իշխողներ դառան իշխան Լվովն ու Միլիկովը և կազմեցին ժամանակաւոր Կառավարութիւն:

Այդ իշխանութիւնն էլ մենք բոլորս լաւ ենք չիշում՝— բուրժուական իշխանութիւնը: Նրա համար ժողովրդական մասսաները նոյն աշխատաւոր գրաստներն էին, որոնց քշում էին՝ մորթոտելով նւաճելու նեղուցները և Կ. Պոլիսը:

Գիւղացին հող չստացաւ. գործաւորին հրապոյրներով խաբխարում էին և զանազան խոստումներով զսպում: Մի աւելի վարպետօրէն շինւած լուծ հնարել, որ այնքան էլ չճնշէ ուսերը, և աւելի հմտօրէն լծել աշխատանքի, որ հնարաւոր լինի քամել բոլոր ոյժերը—ահա թէ ո՞րն էր բուրժուական իշխանութեան նպատակը:

Մեր մտքումն է գեռ համաձայնողականների իշխանութիւնը, Չերնովի և Կերենսկու իշխանութիւնը, երբ փակում էին մեր բանւորական լրագիրները, երբ մեր ընկերներին բանտ էին գցում, իսկ ռազմաճակատներում գնդակահար էին անում զինւորներին, ինչ է թէ նրանք հրաժարւում էին մեռնել ի սէր բուրժուայի:

Մենք չիշում ենք այդ իշխանութիւնը, որ սովորեցնում էր մեզ ծունկ չօրել բուրժուայի առաջ, որ հալածում էր հողային կոմիտէների անդամներին, պատժական զօրախմբեր էր ուղարկում գիւղացիների դէմ և փակում էր գործարանային կոմիտէները: Մենք չիշում ենք՝ թէ ինչպէս նա առաջ մղեց Կորնիլովի հրոսակները, որպէս զի քարուքանդ անէ չեղափոխական Պետրոգրատը, որպէս զի հաստատէ իր միահեծան իշխանութիւնը, բուրժուայի գիկոտառուրան չքաւորների վրայ:

Արագօրէն իրար յաշորդեցին այդ կառավարութիւնները: Եւ այժմս երբ մարդ հարցնում է ինքն իրան, թէ ինչով էր զանազանւում մէկ իշխանութիւնը միւսից, ճշմարիտ, մարդ չէ իմանում, թէ ի՞նչ ասէ. այնքան նման են նրանք միմեանց:

Եւ ցարի իշխանութիւնը, և՛ բուրժուայի իշխանութիւնը, և՛ համաձայնողականների իշխանութիւնը—գրանք բոլորն էլ չենւած էին գործաւորի ու գիւղացու լուծի վրայ, բոլորն էլ միայն բուրժուայի շահերն էին պաշտպանում, և ոչ թէ ժողովրդի շահը: Դրանք բոլորը փոքրամասնութեան իշխանութիւնն էին ներկայացնում մեծամասնութեան վրայ, ունեւոր ձրիակերների իշխանութիւնը աշխատաւորների վրայ:

2. Ի՞նչ է ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերջապէս, հոկտեմբերին ժողովուրդը գլխի ընկաւ, որ քանի գեռ նրա մասին ուրիշի դոււխր կը մտա՛ի—միևնօջն է՝ Նիկոլայինը, իշխան Լվովինը, թէ Կերենսկունը—ինքը միշտ տուժող կը լինի: Ժողովուրդը հասկացաւ, որ չի կարելի բազմամիլիոն աշխատաւոր բնակչութեան գլուխը թողնել աշխատաւորների ռխերիմ թշնամիներին: Ժողովուրդը հասկացաւ, որ ոչ ոք նրանից աւելի լաւ չի կառավարի, և ինքը գործի անցաւ. դէն շարունակ համաձայնողականներին և ամբողջ իշխանութիւնը յանձնեց բանւորների, զինւորների, գիւղացիների և կոզակների պատգամաւորների Խորհրդին:

Այդ օրից ի վեր մենք ունենք Խորհուրդների Իշխանութիւն: Այդ՝ Բանուորի և Դիւզացու իշխանութիւնն է, իւր սեպհական աշխատանքովն ապրող բոլոր չքաւորների իշխանութիւնը: Այդ՝ ճնշող մեծամասնութեան իշխանութիւնն է փոքրամասնութեան վրայ, աշխատաւորների իշխանութիւնը՝ դործարանատէրերի ու կալւածատէրերի և մեծամեծ անատէրերի, վաճառականների և բանկիրների, քաղաքացի վաշխառուների և զիւզացի ցեղերի վրայ: Այդ՝ մի անսահման իշխողութիւն է, պրոլետարիատի և զիւզացի չքաւորների մի գիկատուրա:

Խորհուրդների Իշխանութիւնը՝ որ կայ՝ աշխատաւորների իշխանութիւնն է և մի թիւայն նրանցը: Միայն աշխատաւոր բազմութիւնները, ոչ ոքի չկեղեքողները և ուրիշի աշխատանքը չչահագործողներն են, որ քաղաքացիութեան լիակատար իրաւունքն ունեն Խորհուրդների հանրապետութեան մէջ: Իսկ բոլոր մնացածները՝ ժողովրդից կողուպտած բարիքներով ապրողները, ժողովրդի դէմ բոլոր, ժամնաստօր միջոցներով հուռողները՝ իշխանութիւնից վտարուած են: Ժողովուրդը դիտէ, որ այդ ժողովանց իշխանութեան մօտ թողնելը՝ միևնոյն է թէ իր ձեռքով իւր վիղը թռի ձգել:

Իսկ այդ նա, ի հարկէ, երբէք չի՛ անիւ: Նա արդէն համոզուել է, որ միայն ինքը, ժողովուրդը կարող է հանել իրան աղքատութեան ու ազիտութեան այն ճահեից, որի մէջ զցել են նրան ցարի իշխանութիւնն ու բուրժուան: Նա այժմ արդէն ունի այն՝ ինչ որ բուրժուան միայն խոստանում էր տալ: Նոյն իսկ աւելին ունի քան այն՝ ինչ որ ամենախաբերայ բուրժուան կարող էր խոստանալ:

Ժողովուրդը վերցրեց իրան բոլոր հողերը, բոլոր անտառները, գետնի խորքերը, ջրերը և վերցրեց առանց փրկանքի: Մեռած ու կենդանի ինվեստարը ժողովուրդը նոյնպէս վերցրեց իրան առանց փրկանքի: Ժողովուրդը հարկեր ու կոնտրիբուցիաներ գրեց բուրժուայի վրայ միան-

գամայն հաշւի չառնելով մասնաւոր սեպհականութեան «սուրբ իրաւունքը»: Բոլոր խոշոր արհեստանոցները, գործարանները, հանքերը, ինչպէս նաև դրամասները՝ ժողովուրդը՝ համայն հանրապետութեան ժառանգութիւն դարձրեց: Բոլոր փոխառութիւնները, որ պտրտագրուած էին ցարի և համաձայնողականների կառավարութիւնից, ժողովուրդը ոչնչացրեւ յայտարարեց: Նոյնպէս դասից ժողովուրդը խլեց ոչմն ու իշխանութիւնը, եկեղեցին բաժանելով տէրութիւնից և դպրոցը՝ եկեղեցուց:

Վերջապէս երկար սպասուած խաղաղութիւնն էլ, թէկուզ ծանր, վատ՝ այնու ամենայնիւ ժողովուրդը ձեռք բերեց իր համար, չնայելով բուրժուայի բոլոր ճիգերին երկիրը նորից անյուստալի պատերազմի դիրկը զցելու:

Եւ կապիտալի օգտի համար մարդկանց եռամեայ անմիտ ոչնչացման սարսափներից ժողովուրդին ազատեց Խորհուրդների Իշխանութիւնը՝ աշխատաւորների իշխանութիւնը:

3. Ի՞նչ է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Խորհրդային Իշխանութիւնը տարածուած է այժմ ամենափոքրիկ գիւղից մինչև բազմամիլիոն բազաբը: Նա պարփակում է իր մէջ համայն հանրապետութիւնը: Արդ, ի՞նչ է Խորհուրդների հանրապետութիւնը:

Մեր սահմանադրութեան մէջ, երկրիս հիմնական օրէնքի 10-դ յօդուածում ասուած է.

«Ռուսաստանի հանրապետութիւնը Ռուսաստանի բոլոր աշխատաւորների մի ազատ սոցիալիստական հասարակութիւն է: Ամբողջ իշխանութիւնը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ հանրապետութեան սահմաններում պատկոնում է երկրի համայն բանտրական ազգաբնակչութեան, որ միացած է բազաբների և գիւղերի Խորհուրդներում:

Մեր հանրապետութիւնը այգպիտով, գիւղերի, շէների,

աւանների, ստանիցաների, գիւղաքաղաքների, քաղաքների բոլոր Խորհուրդների մի ապտա միութիւն է: Այդ պատճառով է, որ նա կոչուած է Խորհուրդների Հանրապետութիւն:

Բայց այն շրջանները, որոնք իրենց առանձնայատուկ կենցաղն ու ազգային կազմն ունեն, կարող են Խորհուրդների առանձին միութիւններ կազմել: Ոչ մի ազգի, ոչ մի այդպիսի շրջանի մեր սահմանադրութիւնը չէ արգելում Խորհուրդների մի ինքնօրէն միութիւն կազմել, որ մանուկ է ընդհանուր եղբայրական դաշնակցութեան մէջ և մասնակցում Խորհուրդների ընդհանուր կենտրոնական իշխանութեան ընտրութեանը: Այդպէս էլ մեր հանրապետութիւնը միշտ պատրաստ է ընդունելու իր եղբայրական միութեան մէջ, իբրև հաւասար իրաւանց տէր անդամներ, բոլոր իրանից բռնի կերպով խլած շրջաններն ու ազգերը:

Այդ պատճառով մեր Խորհուրդների Հանրապետութիւնը Ֆեդերատիվ (դաշնակցական) Հանրապետութիւն է կոչուում:

Խորհուրդների Իշխանութիւնը խորտակել է հին իրաւակարգի ստրկութեան և ճնշման հիմքերից շատերը: Այդ իրաւակարգի մնացած հիմքերը նա փորփորում է անդադար և ցնցում մեր Հանրապետութիւնը, ինչպէս որ այդ հռչակեց զեռ Խորհուրդների III-րդ համառուտական համագումարը, որ յիշու է իմնական նպատակն է զնուծ՝ ոչնչացնել մարդը մարդուն շահագործելու ամեն մի կերպը, միանգամայն վերացնել հասարակութեան բաժանումն ըստ դասակարգերի, անխնայօրէն ճնշել շահագործողներին, հաստատել հասարակութեան սոցիալիստական կազմակերպութիւնը և սոցիալիզմի յաղթանակը բոլոր երկիրներում» (տե՛ս Սահմանադրութեան յօդ. 3):

Այդ պատճառով Խորհուրդների Ֆեդերատիվ Հանրապետութիւնը կոչուում է՝ Սոցիալիստական:

Առաջին խնդիրը՝ քաղաքական իշխանութեան նւաճումը և այն՝ Խորհուրդների ձեռքում կենտրոնացնելն՝ արդէն լուծւած է ընդհանուր և գլխաւոր գծերով: Հին կառավարչական և հասարակական հիմնարկութիւնների տեղ, ստեղծւել են և ստեղծուած են նորերը՝ խորհրդայինները: Մնում է, որ այդ իշխանութիւնը, այդ հիմնարկութիւնները զարգանան և զօրանան:

Երկրորդ խնդիրը՝ միասնական խորհրդային Ֆեդերացիայի ստեղծումը, որի մէջ մտնելին այն բոլոր շրջաններն ու ազգերը, որոնք այդ կը ցանկանան՝ ընթացիկ օրերի դործ է: Այդ խնդրի իրադրոժման համար մեր Հանրապետութիւնը դանդաղ, բայց ուղիղ ճանապարհով է ընթանում՝ անընդհատ զորացնելով երկրի ներսը Խորհուրդների Իշխանութիւնը, անդալար կուելով անկարգութեան, քայքայման և հակայեղափոխութեան դէմ, եռանդուն աշխատանք թափելով իւր անտեսական և զինւորական ոյժի ստեղծման վրայ:

Երրորդ խնդիրը՝ կեանքի բոլոր կողմերի վերաշինումը նոր, սոցիալիստական օկրբունքների հիմքերով և սոցիալիզմի յաղթանակն ուրիշ երկրներում՝ նոյնպէս մեր հերթական նպատակն է: Այդ մենք իրագործում ենք կրկնակի միջոցով: Առաջինը՝ բանւոր դասակարգի և ամենաչքաւոր գիւղացիութեան անողորմ դիկատուրայի միջոցով մենք վերջնականապէս նզովում ենք բուրժուազիայի դիմադրութիւնը: Երկրորդ՝ ամենօրեայ աննկատելի ստեղծագործական աշխատանքի միջոցով մենք, քար-քարի վրայ զննելով, կառուցում ենք մարդկային նոր յարաբերութեանց զեղեցիկ շէնքը հաւասարութեան և արդարութեան հիմունքի վրայ:

Մեր Խորհուրդների Հանրապետութիւնը Ռոսաստանի բոլոր բանւորների եղբայրական մի միութիւն է, որ ռուս և միջազգային բուրժուազիայի դէմ կուելով, աշխատում է ստեղծել սոցիալիստական իրաւակարգ և տարածել սոցիալիզմը համայն աշխարհում:

4. Ո՞վ կՍՐՈՂ է ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԻՐԱԻՍՍՈՒ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻՆԵԼ

Սոցիալիստական շինարարութեան գործը բոլորովին նոր գործ է, և այստեղ մենք գործ ունեցանք այնպիսի հարցերի հետ, որոնց մասին ոչ ոք ոչ մի երկրում հասկացողութիւն չունէր:

Ամենից առաջ՝ ո՞ր մարդկային նիւթից պէտք է սոցիալիստական հասարակութիւն կազմել: Ո՞վ կարող է Խորհուրդների սոցիալիստական ճանրապետութեան իրաւաստ քաղաքացի լինել:

Մենք արդէն ասացինք, որ մեր հանրապետութեան մէջ ո՛չ ամբողջ բնակչութիւնը կարող է օգուել քաղաքացիութեան բոլոր իրաւունքներին: Դեռ 3-րդ համառուտական համադրումարը չալտարարեց. «Պրոլետարիատի՝ իր շահագործողների դէմ մղած վեճական կռւի վայրկեանին՝ շահագործողների համար տեղ չի կարող լինել իշխանութեան օրգաններին որ և է մէկի մէջ (տե՛ս Սահմանադրութեան 7 յօդ.):

Բուրժուազիան և նրա պաշտպանները, մենշևիկները և աշակողմեան էսէրները (սոցիալիստ-ճեղափոխականները) զրանից շատ դժգոհ են: Իսկ բանուորի և զիւղացու համար այդ ինքնին հասկանալի է:

Չէ՞ որ ոչ ոք զէնք չի տալ իր թշամու ձեռքն իր դէմ, իսկ Խորհուրդների իշխանութիւնը՝ ճեղափոխական իշխանութիւն է, որ կուսում է իշխանութիւնը խլելու աշխատանքի վերջնական յաղթանակի համար կապիտալի վրայ: Բանուոր ժողովրդի դիմացը դեռ կանգնած է նրա ամենաոխերիմ թշնամին՝ ներքին և արտաքին հարստանորիճ կապիտալիստը: Նրա ձեռքից զէնքը պէտք է կորզել, և ոչ թէ զէնք տալ նրա ձեռք: Այդ թշնամուն պէտք է իշխանութիւնից որքան կարելի է հեռու պահել: Ահա՛ թէ ինչո՞ւ ենք մենք ասում, որ Խորհուրդների

ճանրապետութեան մէջ քաղաքացիութեան լիակատար իրաւունքը բանուորներն են վայելում, և մի՛միայն նրանք:

Բանուորները միայն իրաւունք ունին մասնակցելու Խորհուրդների իշխանութեան կառուցմանը:

Ձրիակերների համար այստեղ չը կայ տեղ և չը պէտք է լինի: Բայց այս էլ կայ, որ մենք թողնում ենք նրանց աշխատանք էլ ունենալու, իրանց աշխատանքի արդիւնքն էլ վայելելու լիակատար իրաւունքը, — մի բան, որ նրանք մեզ երբէք չեն՝ թողել:

Նրբ այդ պարոններն ուրիշի աշխատանքը կողոպտելու սովորութիւնից կանցնեն քեզիսկան աշխատանքով ապրելու սովորութեան՝ նորա նոյնպէս քաղաքացիութեան բոլոր իրաւունքները կը ստանան:

Ինքնին հասկանալի է, որ չի կարելի Խորհուրդների ճանրապետութեան մէջ քաղաքացիութեան լիակատար իրաւունքներ տալ նա՛ն Խորհուրդների իշխանութեան այնպիսի հակառակորդներին, ցարիզմի կողմնակիցներին ու ծառաներին, որպիսիք են՝ հողեօրականութիւնը, նախկին օխրանները, ժանգարմները և ոստիկանները (տ. յօդ. 65, կէս դ. և ե.):

5. Ո՞վ է ԱՇԽՈՒՍԱԻՈՐ

Այդ հարցն այնքան էլ պարզ չէ, որքան կարող է թւալ: Կապիտալիստ կայ՝ որ նոյնպէս աշխատում է, օրինակ՝ գործարանի կառավարիչը: Մի արհեստաւոր, որ երկու քարզեան է վարձում, կամ մի զիւղացի, որ մի քանի նօքար է պահում, նոյնպէս աշխատում են:

Ուստի Խորհուրդների ճանրապետութեան մէջ քաղաքացիութեան լիակատար իրաւունքներ ունենալու ամենաառաջին պահանջը ոչ միայն նրանում է կայանում, որ մարդ աշխատէ, այլև նրանում, որ նա դրա հետ միասին ուրիշ

մարդու աշխատանքից շահ չստանայ (ուրիշի աշխատանքը չշահագործէ)։

Այդ պահանջին բաւարարութիւն տալիս են—

Առաջինը՝ արդիւնաբերութեան բոլոր վարձկան բանւորները, որոնք աշխատում են գործարաններում, արհեստանոցներում, հանքերում, անտառապահութեան, ձկնորսութեան մէջ և այլն։

Երկրորդը՝ բոլոր բաւարակները, այսինքն՝ գիւղատնտեսական բանւորները, որոնք զուրկ են իրենց տնտեսութիւնից և վարձով են բանում։

Երրորդը՝ բոլոր վարձու ծառայողները, ինչպէս՝ տնային ծառայողները, գործակատարները, զբոսենեակային աշխատաւորները և այլն։

Չորրորդը՝ այն գիւղացիք, որոնք իրանց տնտեսութիւնը վարելու համար վարձու աշխատանքից չեն օգտուում։

Նինգերորդը՝ այն արհեստաւորները, անայնպէսները և տանը բանող ուրիշ անձինք, որոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում։

Վեցերորդը՝ ինտելիգենտ աշխատանքի այն մշակները, ինչպէս՝ ուսուցիչները, բժիշկները, ինժինէրները, ազրոնոմները, անտառաբուծները և այլն, որոնք աշխատում են հասարակաց օգտին։

Ահա՛ զրանք են հասարակութեան այն խաւերը, որոնց պէտք է բանւորների շարքը դասել և թույլ տալ մասնակցելու Խորհրդային Հանրապետութեան շինարարութեան գործին. (տ. յօդ. 64)։

6. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ Ո՛Վ ԻՐԱԻՈՒՆՔ ՈՒՆԻ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՒ ԸՆՏՐԻԵԼՈՒ

Խորհրդային Հանրապետութիւնը ընտրութեան իրաւունքի միայն մի լուրջ սահմանափակումն է նանաչում, այդ

ամբողջ բուրժուազիայի զրկումն է ընտրութեան իրաւունքից (տ. Սահմանադրութեան 65 յօդ.)։ Մնացած քաղաքացիք բոլորն էլ իրաւունք ունին ընտրելու և ընտրւելու, եթէ նոքա հասել են 18 տարեկան հասակին, թողջ դատողութեան աէր են և ժողովրդական դատաստանով քաղաքացիութեան իրաւունքից զրկւած չեն։

Խորհրդային Հանրապետութիւնը ո՛չ ազգայնական, ո՛չ դաւանական սահմանափակումներ չէ՛ դնում։ Ամեն մի բանւոր և ուրիշի աշխատանքը չշահագործող մարդ—լինի նա ռուս թէ հրեայ, թաթար թէ հայ, լատիշ թէ էստոն, ուղղափառ թէ կաթոլիկ, բողոքական թէ մահմեդական՝ միևնոյնն է—իրաւունք ունին ընտրելու և ընտրւելու։ Խորհրդային Հանրապետութիւնը սահմանափակումներ չէ՛ դնում կանանց նկատմամբ էլ։ Կինը նոյն իրաւունքներն է վայելում, ինչ որ տղամարդը, կարող է ընտրել և ընտրւիլ ամենապատասխանատու պաշտօնների համար, եթէ միայն նա դրա համար ընդունակութիւններ ունի (տ. եր. 64)։

Մինչև անգամ այն օտարերկրացիներին բանւոր դասակարգից, որոնք ապրում են իրենց աշխատանքով Ռուսաստանի Հանրապետութեան հողի վրայ, սահմանադրութիւնն ընտրողական իրաւունք է տալիս (տ. յօդ. 20)։

Ոչ մի երկրում չկայ այդ, որովհետև միայն սոցիալիստական հանրապետութիւնն է գործով նանաչում, որ բոլոր մարդիկ եզբայրներ են։

Ահա՛ հէնց այդ քաղաքացիք ու քաղաքացուհիներն են, որ՝ միասին վերցրած՝ կազմում են Ռուսաստանի Սոցիալիստական Չեզբերատիվ Խորհրդային Հանրապետութեան լիազոր ժողովուրդը։

Եթէ ո՛ր և է խորհրդի մէջ ներս մտնեն այնպիսի անձինք, որոնք օրէնքով զուրկ են ընտրողական իրաւունքից (յօդ. 65), նրանց պէտք է անյապաղ արտաքսել խորհրդից մեր սահմանադրութեան ուղիղ հիման վրայ։

7. Ի՞նչ ՉՊԷՄ ԵՆ ԿԱՅ ԱՐԻՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷ

Մեր ժամանակում, երբ ամենակատարի կռիւ է մղուում բանւոր ժողովրդի և հին աշխարհի միջև, չկան անկուսակցական մարդիկ, ոչ էլ կարող են լինել: Կամ Խորհրդային Իշխանութեանը հակառակ էս, կա'մ նրա կողմն էս: Միջին դրութիւն չկայ:

Բայց ի'սկը՝ Խորհրդային Իշխանութեան կողմն այժմս կանգնած է միայն մի կուսակցութիւն, թէև ամենամեծը՝ կոմունիստները (բոլշևիկները): Ճախակողմեան սոցիալիստ-լեղափոխականների կուսակցութիւնը՝ Խորհրդային Իշխանութեան դէմ ունեցած այն խռովութիւնից յետոյ, որ նրանց կենտրոնական կոմիտէսը հանեց այս տարւան յուլիսի 6—7-ին, երկու մասի է պառակտւել: Խորհրդային Իշխանութեան կողմնակիցներ միայն այն ճախակողմեան էսէրներին կարելի է համարել, որոնք վնասկանապէս դատապարտում են իրանց կենդրոնական կոմիտէսը և նրա յանցաւոր խռովութիւնը խորհուրդների դէմ: Այդ հանգամանքը ճշտութեամբ պէտք է պարզել ամեն մի ճախակողմեան էսէրի վերաբերմամբ, մինչև որ Խորհրդային Իշխանութեան պաշտպանները նրանց մէջ կանչաւեն յանցաւոր դաւադիրներից և կկազմեն մի առանձին կուսակցութիւն կամ կձուլեն կոմունիստներին հետ:

Բոլոր մնացածները՝ ճախակողմեան էսէրների մի մասը, մենշևիկները (սոցիալ-դեմոկրատները), ազակողմեան սոցիալիստ-լեղափոխականները, կադեանները, հոկաեմբերեանները՝ ձգտում են բանւոր-գիւղացիական իշխանութիւնը տապալել: Այնպէս որ բանը պարզ է. եթէ մէկը Խորհրդային Իշխանութեան կողմն է նա կա'մ բոլշևիկ է, կա'մ ճախակողմեան սոցիալիստ-լեղափոխական: Եթէ նա այդ իշխանութեան համար բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ է առնում՝ նա բոլշևիկ է, կամ բոլշևիկներին համակիր: Եթէ նա այդ իշխա-

նութիւնն ընդունում է, բայց նրա համար պատասխանատուութիւն չէ վերցնում իր վրայ՝ նա ճախակողմեան սոցիալիստ-լեղափոխական է, կամ ճախակողմեան էսէրներին համակիր: Իսկ եթէ մէկը հակառակ է Խորհրդային Իշխանութեանը, նա պատկանում է միւս կուսակցութիւններից մէկն ու մէկին, կամ, զուցէ և ճախակողմեան էսէրներին: Այդ կուսակցութիւնների միջև զանազանութիւնը մեծ չէ. նորա բոլորն էլ բանւոր-գիւղացիական իշխանութեան թշնամիներն են:

Երբ մենք Խորհրդի ընտրութիւններն ենք սկսում, մեզ համար կարևոր է իմանալ, թէ ո՞վ ի՞նչ կուսակցութեան է պատկանում, կամ ո՞ր կուսակցութեանն է համակրում: Մենք հօ չենք ընտրի նրան, ով Խորհուրդների Իշխանութեանը հակառակ է, ով որ Խորհուրդ է դնում միայն մի նպատակով, այն է՝ յանձնել իշխանութիւնը բուրժուազիայի ողորձութեանը:

82562
1006

«Համակիրներին» ու «անկուսակցականներին» զգուշութեամբ պէտք է վերաբերւել: Շատ անգամ այդ քօղի տակ են թագնւում Խորհրդային Իշխանութեան թշնամիները—մանաւանդ կեղեքիչները գիւղերում—որպէս զի ներս մտնեն խորհուրդների մէջ և այնտեղ իրանց մութ գործերը տեսնեն: Մեր օրերում ազնիւ գիտակից մտրդը չէ՛ կարող ո'չ «համակրող» լինել, ո'չ «անկուսակցական». նա բաց-աշխարայ կանդնում է բարրիկաղի այս կամ այն կողմը:

Բոլոր ընկերներն առանձին ուշադրութեամբ պէտք է հետևեն, որ ընտրութեանց մէջ չհարողանայ մասնակցութիւն ունենալ ոչ որ այն անձինքներից, որոնք՝ մեր սահմանադրութեան համաձայն՝ ընտրողական իրաւունքից չեն օգտուում (տ. յօդ. 65): Միայն այդ պայմանում խորհուրդներն ամենուրեք՝ յիրաւի բանւոր ազգաբնակչութեան իշխանութիւնը կներկայացնեն:

Գործարանային և գիւղական ժողովների ընտրութիւններին ամեն մի կուսակցութիւն զայիս է՝ թեկնածուների

առաջուց պատրաստած ցուցակով, որի համար էլ նա հրաւիրում է ընտրողներին ձայն տալ: Պարզ բան է՝ էթէ մենք ուզում ենք, որ մեր կուսակցութիւնը կարելոյն չափ շատ ձայներ ստանայ, ընտրութիւններից առաջ պէտք է նախընտրողական ժողովներ հրաւիրենք, որոնց մէջ պէտք է բացատրենք, թէ ի՞նչ է մեր կուսակցութեան ուղածը, և թէ ի՞նչու ամենքն էլ պէտք է ձայն տան իսկ և իսկ մեր, և ո՛չ թէ մի ուրիշ կուսակցութեան:

Բացատրենք օրինակով թէ ինչպէս են ընտրութիւնները կատարուում: Ասենք՝ թէ հարկաւոր է երեք պատգամաւոր ընտրել: Քւէարկութեանը մասնակցում են ընդամենը 6000 մարդ: Այդ ժամանակ բոլշևիկները երեք թեկնածու են դնում, ձախակողմեան էսէրները՝ երեք, մենշևիկները՝ երեք և Ֆնացած բոլոր կուսակցութիւններն էլ երեք-երեք: Իհարկէ, նրանք կարող են աւելի քիչ թեկնածուներ առաջադրել: Բայց ամեն մի կուսակցութիւն այնքան թեկնածուներ է դնում, որքան որ պէտք է ընտրել: Այդ նա անում է այն յոյսով թէ բոլոր ձայները կարող են տրւել նրա ցուցակին և այն ժամանակ կանցնեն բոլոր երեքն էլ:

Ամեն մի քւէարկող կտայ այն կուսակցութեան ցուցակը՝ երեք թեկնածուների ազդանուններով՝ որին նա համակրում է, կամ որին ինքը պատկանում է: Չկայ աւելի վատ բան, քան այն, երբ ընտրողները ցուցակում՝ կուսակցական թեկնածուների շարքի մէջ մտցնում են մի որեւիցէ «անկուսակցականի» անուն: Դրանով նրանք միայն ցրում են ձայները. «անկուսակցականին» էլ չեն անցկացնիլ, կուսակցութեանն էլ կարող են վնասել, նրա թեկնածուին զրկելով իրանց ձայներից:

Ենթադրենք, թէ ձայնատուութեան հետևանքը հետևեալն է. բոլշևիկները 4100 ձայն են ստացել, ձախակողմեան էսէրները՝ 1500 ձայն, մենշևիկները՝ 300, միւսները 100: Խորհրդում մի տեղ ստանալու համար անհրաժեշտ է 2000 ձայն

հաւաքել: Բոլշևիկները երկու անգամ 2000 և էլի մի հարիւր ձայն ունին, հետևապէս, նրանք երկու տեղ են ստանում: Ձախակողմեան էսէրները 2000 ձայն չեն հաւաքել, նրանց պակասում է 500, բայց նրանք՝ միւսնոյն է մի տեղ ստանում են, որովհետև ոչ ոք աւելի ձեռ թւով ձայներ չունի: Իսկ մենշևիկները և միւսները ոչ մի տեղ չեն ստանում*):

Ամեն անգամ ընտրութիւններից առաջ ղեկավարները սահմանում են այս կամ այն կարգը, որ ամեն մի ընտրող պէտք է պահպանէ: Եթէ այդ կարգը խանդարւում է—օրինակ, երբ մի մարդ մի քանի թերթիկ է տալիս,—ընտրութիւնները կարող են անվաւեր համարւել և նորերը նշանակւել (տ. յօդ. 71—77):

Երբ խորհրդի ընտրած պատգամաւորները հաւաքւած են լինում, ամեն մի կուսակցութիւն ցուցակագրում է իրան պատկանող, կամ իրան համակրող պատգամաւորներին: Այդ ցուցակից պարզւում է, թէ օ՞ր կուսակցութիւնը քանի կողմնակից ունի: Այստեղ պէտք է զգուշանալ այն մարդկանցից, որոնք իբր թէ «անկուսակցականների» ցուցակ են կազմում: Մենք արդէն տեսանք, որ անկուսակցականներ իրօք չկան, և ազատ բաղաբացու համար ածօթ է մի այդպիսի թակարդի մէջ ընկնելը:

Երբ ցուցակագրութիւնը պարզած կլինի, թէ ամեն մի կուսակցութիւն քանի կուսակցից ունի, այն ժամանակ հեշտ է ամեն տեսակ ընտրութիւններ կատարել ըստ կուսակցութեանց:

Ենթադրենք թէ համաժողովի նախագահութիւն պէտք է ընտրել: Բոլշևիկները 120 կողմնակից ունեն, ձախակողմեան սոցիալիստ-լեզափոխականները՝ 60, միւս կուսակցութիւնները՝ 30: Պէտք է 7 մարդ ընտրել, այսինքն՝ ամեն մի 30 մարդու

*) Ընտրութիւնների կատարման մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ընթերցողը կարող է գտնել Ս. Գ. Լոդինսկու գրքով «Ընտրութեան սխալները մասին»: Հրատ. Մ. Ա. Նասնիի, 1917:

համար մէկը: Այն ժամանակ բոլշևիկները ստանում են 4 տեղ, ձախակողմեան էսէրները՝ 2 տեղ, միւս կուսակցութիւնները՝ 1 տեղ:

Ընտրութիւնները այդ գէպքում ըստ Ֆրակցիաների են կատարւում, այսինքն՝ ամեն մի կուսակցութեան կողմնակիցների առանձին ժողովներում. բոլշևիկներն իրենց կողմնակիցներին են ընտրում, ձախակողմեան սոցիալիստ-դեմոկրատիականներն՝ իրանց և այլն: Ընտրութիւնները քսաց քարկուծեամբ են կատարւում: Իսկ եթէ Ֆրակցիայի մեծամասնութիւնը դադանի քէտրկութիւն է պահանջում, այդ գէպքում թերթիկներով են քէտրկում:

Այդպէս են կատարւում նաև Խորհուրդների Գործադիր Կոմիտէների ընտրութիւնները: Գաւառական, նահանգական, շրջանային և համառուսական ժողովներին պատգամաւոր ուղարկելու համար կատարուող ընտրութիւնները, երբ մէկ, կամ սակաւթիւ պատգամաւորներ պէտք է ընտրել, կատարւում է արդէն ոչ թէ ըստ Ֆրակցիաների, այլ ընդհանուր ժողովից:

Պատգամաւորները, ինչպէս նաև գործադիր կոմիտէների անդամները ընտրւում են որոշ ժամանակամիջոցով: Բայց եթէ ընտրողները զանում են, որ նրանց ընտրած պատգամաւորը համապատասխան չէ իր կոչմանը, այդ գէպքում նրանք իրաւունք ունեն՝ ամեն մի բոպէ յետ կանչել նրան և նրա տեղը մի ուրիշ անձն ընտրել: Իրա համար միմիայն այն է պահանջւում՝ որ յետ կանչելու համար ձայն տայ այն ընտրողների մեծամասնութիւնը, որոնցից ուղարկւած է պատգամաւորը:

Յետ կանչելու այդ իրաւունքով Խորհրդային ընտրութիւններն էական կերպով տարբերւում են պարլամենտի բուրժուական ընտրութիւններից: Պարլամենտական ընտրողները իրանց ընտրած պատգամաւորին յետ կանչելու իրաւունք չունեն, թէկուզ նա ժողովրդի իսկական դաւանանք դուրս գայ:

(Ընտրութիւնների մասին տես Սահմանադրութեան 66 — 68 յօդ.):

8. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊԱՅԵԼՈՒ ՀՍՄԱՐ ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ՄԻ-ՂՈՑՆԵՐ ՍՏԱՅԻՈՒՄ

Խորհրդային Իշխանութիւնը ժողովրդից է ընտրւած նրան ծառայելու համար: Այդ՝ ժողովրդի ձեռքով իւր միջից ջոկւած մարդիկն են, որոնց յանձնւած է որոշ աշխատանք:

Խորհրդային ծառայողները, ինչպէս և բոլոր ուրիշները, պէտք է իրանց աշխատութեան համար վարձատրութիւն ստանան: Եւ որովհետև նրանք բոլորը ժողովրդին են ծառայում, ժողովուրդն էլ պէտք է նրանց պահէ:

Ամեն մի քաղաքացի պէտք է իւր մասը վճարէ Խորհուրդների զանձարանին:

Այդ տեղի է ունենում ուղղակի և անուղղակի հարկերի միջոցով: Երբ քաղաքացու գոյքի կամ եկամուտի վրայ առկոսական հարկ է դրւում, կամ երբ զխահարկ և տասանորդ է առնւում, ինչպէս այդ առաջ էին անում, այդ՝ ուղղակի հարկ է:

Երբ ապրանքի վրայ մաքս են դնում, ինչպէս՝ լուցիկ, թամբաքէի, շաքարի և ուրիշների վրայ դրւածները, այդ՝ կողմնակի հարկ է: Իրանց նշանակութեան համաձայն՝ հարկերը լինում են՝ տեղական (գեմսկից) և համապետական:

Խորհրդային Իշխանութիւնը ժամանակ դեռ չէ ունեցել նոր հարկահանական կարգեր սահմանելու: Ուստի բոլոր առաջուց սահմանւած հարկերը պէտք է ամեն մի քաղաքացու ձեռքով իր ժամանակին տրւեն չհակառակ գէպքում մենք մեր իսկ լիազօրւածներին, մեր իսկ կառավարութեանը նեղ տեղը կղցնենք, և նա հարկադրւած կլինի յետ քաշւել իսկ նրա տեղը կրճնեն բուրժուադիայի մարդիկ:

Ընկերներից շատերը պարզապէս սովոր են ամեն ինչ սպասել վերելից՝ կենտրոնական իշխանութիւնից, բոլորովին

մոռանալով, որ պետական դանձարանում միայն այն ժամանակ է զրամ լինում, երբ քաղաքացիք հարկը վճարում են:

Պետական դանձարանից երբէք տեղական հաստատութիւնների կարիքների համար զրամ չէր ծախսուում: Կառավարութիւնը միայն աղմինխտրատիւ մասի (վարչութեան) վրայ էր ծախս անում: Իսկ միւս ծախսերը ծածկելու համար տեղական հարկեր կային՝ զեմսկից և քաղաքային:

Քանի մեր մէջ դեռ նոր հարկային կարգեր չեն մտցրած, անհրաժեշտ է ո՛չ միայն պահպանել հին տեղական հարկերը, այլ և աւելացնել նրանց, որովհետև կեանքն այն ժամանակից ի վեր թանգացել է մի քանի պատիկ: Նշանակում է խորհուրդների ծախսերն էլ բարձրացել են, և նրանց ծածկելու համար անհրաժեշտ են աւելի բարձր հարկեր: Այդ պէտք է պարզ լինի ամեն մի քաղաքացու համար:

Բայց արդար չէր լինի միատեսակ չափով հարկ առնել ինչպէս չքաւորներից, այնպէս էլ հարուստներից: Ուստի անհրաժեշտ է ուղիղ առտիճանաբար բարձրացող դուրքային հարկ սահմանել, գոյքի և կապիտալի հարկ՝ հետեւեալ նորձով (սահմանաչափով):

| | | | | | |
|--------|----------|-----|----------|--------|-------|
| 5.000 | ըուրլուց | 5% | այսինքն՝ | 250 | ըուր. |
| 10.000 | » | 25% | » | 2.500 | » |
| 15.000 | » | 40% | » | 6.000 | » |
| 20.000 | » | 50% | » | 10.000 | » |
| 25.000 | » | 60% | » | 15.000 | » |
| 30.000 | » | 70% | » | 21.000 | » |

և այլն: Այս միայն մի օրինակելի նօրձ է: Կարելի է այդ ուրիշ կերպ էլ կազմել, բայց անպատճառ այնպիսի հաշուով, որ ունեւորին 10 հազար ըուրլուց աւելի չմնայ:

Հարկերը սահմանուում են ամեն մի գաւառում՝ գաւառական պատգամաւորների ժողովներում և հաստատուում են նահանգական ժողովներում: Համապետական հարկերը կենտրոնական իշխանութիւնից են սահմանուում: Հարկերը ժողով-

ուում են շինական և վոլոստի խորհուրդների, իսկ քաղաքներում՝ քաղաքական խորհուրդների ձեռքով:

Հարկերից հաւաքած գումարները պէտք է մտցնել տեղական դանձարանը պետութեան հաշուին: Այդ զրամները չի կարելի միայն տեղական համարել. նրանք պատկանում են խորհրդային բովանդակ հանրապետութեան: Պատահում է, որ մի վոլոստ՝ բուրժուազիայի վրայ հարկ դնելով այնքան է ժողովում, որքան մի գաւառ էլ չի՝ ժողովի: Կենտրոնական Խորհրդային Իշխանութիւնը պէտք է իմանայ թէ՛ զրամի ի՞նչ քանակութիւն կարելի է ունենալ համայն Ռուսաստանում, նրա սօր մասը կարելի է բաժին հանել տեղական կարիքների համար, սօրը՝ համապետական, որպէսզի մուտքերի և ծախսերի հաւասարակշռութիւն լինի և զրամը կարելոյն չափ արդարացի կերպով բաշխւի առանձին շրջաններին:

Տեղական պէտքերի, խորհուրդը պահելու և ուրիշ ծախսերի համար միջոցներ սառնալու նպատակով ամեն մի խորհուրդ իւր նախահաշիւն է կազմում և ուղղում այն իրանից բարձր խորհրդին. շինական նախահաշիւը վոլոստի խորհուրդն է գնում, վոլոստինը՝ գաւառական, գաւառինը՝ նահանգական, նահանգինը՝ կենտրոնական:

Այդ կարգով ամեն մի խորհուրդ ստանում է իրեն անհրաժեշտ միջոցները անկախ այն բանից, թէ՛ կարո՞ղ է արդեօք իր տեղում հաւաքել այդ միջոցները՝ կամ ոչ:

(Հարկերի, եկամտւոնների և ծախսերի մասին տես Սահմանադրութեան 79—88 յօդ.):

9. Ի՞նչ է ԽՈՐՀՈՒՐԴԸ

Բոլոր միւս պետութիւններից տարբեր՝ մեր Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութիւնը ներքեից վերև կառավարուում է բացառապէս նոյն ինքն

բանւոր ժողովրդի միջոցով, որ դրա համար՝ բանւորներին, զիւղացիներին, կողակներին և ուրիշ պատգամաւորներին խորհուրդներ է բնարուծ:

Խորհրդային Նանրապետութեան մէջ չկայ և չպէտք է լինի ոչ մի ուրիշ իշխանութիւն, բացի խորհրդայինից: Շէնուծ խորհուրդն է, վոյսատու՝ խորհուրդը, գաւառուծ՝ խորհուրդը, նահանգուծ, քաղաքուծ և նոյն ինքն կենտրոնուծ խորհուրդը:

Չպէտք է դոյութիւն ունենան առանձին-առանձին բանւորներին խորհուրդներ, զիւղացիներին և ուրիշ խորհուրդներ:

Ե՛ւ բանւորները, և՛ զիւղացիները, և՛ զինւորները, և կողակները, մէկ խօսքով՝ որոշ տեղի բոլոր աշխատաւոր ժողովուրդը բնարուծ է՝ բանւորներին, զինւորներին, զիւղացիներին, կողակներին և ուրիշ պատգամաւորներին մի ընդհանուր խորհուրդ:

Ինքը խորհուրդը՝ կա՛մ բոլոր իրաւասու քաղաքացիներին մի ժողով է, ինչպէս, օրինակ՝ շինական խորհուրդը, կա՛մ աշխատաւոր ազգաբնակիւթիւնից բնարած պատգամաւորներին ժողով է, ինչպէս վոյստի, գաւառական, նահանգական, շրջանային և համառուսական խորհուրդները:

Իր իրաւասութեան շրջանուծ և իր տեղի (տեքստորիտայի) սահմաններում խորհուրդը գերագոյն իշխանութիւնն է:

Խորհուրդն օրէնսդիր հաստատութիւն է: Նա օրէնքներ ու կանոններ է սահմանուծ, գործադիր իշխանութիւն է բնարուծ, նրա գործունէութեանն ուղղութիւն է տալիս և ստուգում նրան:

Խորհրդի գործադիր իշխանութիւնն է գործադիր կոմիտէն: Նա է՝ որ իսկապէս գործի բոլոր ծանրութիւնն ու պատասխանատուութիւնն է կրում խորհրդի առաջ:

Խորհուրդը հրաւիրուծ է գործադիր կոմիտէից՝ նրա հայեցողութեամբ, կամ խորհրդի անդամներին՝ ոչ պակաս, քան

կէտի պահանջով: Սակայն քաղաքային խորհուրդը պէտք է գումարւի ոչ պակաս՝ քան շաբաթը 1 անգամ, իսկ շինականը ոչ պակաս՝ քան շաբաթը 2 անգամ (տ. յօդ. 59):

10. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԻՆՉՊԷՍ ՊԵՏԲ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԻ

Գործերը կանոնաւորապէս վարելու համար խորհրդի բնարած գործադիր կոմիտէն բաժանմունքներ է կազմակերպում: Թէ խորհրդում ի՛նչ բաժանմունքներ պիտի լինեն՝ մենք մտնրամասն չետոյ կատենք:

Բաժանմունքի գլուխն է անցնում գործավարը, որ գործադիր կոմիտէի անդամներից մէկն է լինում և որ բաժանմունքի բոլոր գործի համար պատասխանատուն է հանդիսանում: Աւելի բարդ և լուրջ խնդիրները նա յանձնում է կենտրոնական կոմիտէի քննութեան, իսկ մնացածներն ինքնազրուխ է լուծում՝ համապատասխան հրահանգներ տալով իւր աշխատակիցներին:

Աւելի մեծ խորհուրդներում (գաւառականից սկսած) ամեն մի բաժանմունքի գործավարի կողքին հաստատուում է երեք հոգուց բաղկացած մի ղեկավար կոլլեգիա, որ նշանակում է գործադիր կոմիտէից: Կոլլեգիայի բոլոր անդամները պէտք է տւեալ բաժանմունքի աշխատակիցների թւում լինեն:

Ամեն մի բաժանմունքի բոլոր գործերը երկու զանազան մասերի են բաժանուծ: Մի կողմից՝ բնգհանուր քաղաքական ղեկավարութեան և վերաստուգման (կոնտրոլի) գործն է, միւս կողմից տեխնիկական գործը: Առաջին գործը միայն խորհրդի պատասխանատու բանւորներին կարող է յանձնել: Երկրորդը կարելի է և պէտք է յանձնել տեխնիկ-մասնագէտներին: Առանց ինժեներների, բժիշկների, ագրոնոմների, օֆիցերների, հաշւապահների, ուսուցիչների և այլն՝ Խորհուրդների իշխանութիւնն, ինչպէս և ամեն մի ուրիշ իշխանու-

Թիւն, չէ կարող կառավարել: Ընտրւած պատգամաւորները մէջ այդպիսի մարդիկ քիչ կգտնուեն: Ուստի նրանց պիտի վարձել, բայց, իհարկէ, բոլոր նրանց գործը պէտք է դնել չուսայի քննիչներին, գործադիր կոմիտէի անդամներին մշտական խիստ կոնտրոլի տակ:

Յետոյ, խորհուրդները պէտք է ձգտեն, կարելոյն չափ, կրճատել խորհրդային հաստատութիւնների պահպանութեան համար եղած ծախսերը: Խորհրդային Իշխանութիւնը չպէտք է աւելի թանկ նստէ ժողովրդին, քան նախկինը՝ ցարի Իշխանութիւնը, Խորհրդի բանւորներն այդ բանը լաւ պէտք է չիշեն: Ուստի յանցաւոր բան է գործադիր կոմիտէները լեյնել զիւղերից ուղարկւած 50—90 պատգամաւորներով, ինչպէս այդ յանախակի լինում է: Խորհրդի գործն առաջ չի դնայ, եթէ մի քանի մասնագէտների տեղ նստեն մէկ երկու տասնեակ անփորձ, կիսատեղեակ բնիկներ:

Գործադիր կոմիտէների անդամների թիւը շէնքուած՝ 5-ից, իսկ քաղաքներում 15-ից աւելի չպէտք է լինի (Պետերբուրգում և Մոսկւայում 40-ից ո՛չ աւել): Ընտրութիւնները կատարւում են այն հաշուով, որ խորհրդի 50 անդամին 1 կոմիտէի անդամ դայ, բայց 3-ից ո՛չ պակաս (տ. 58 յօդ.):

Գործադիր կոմիտէի անդամները տէրեր են հանդիսանում անդերում: Նրանք իրանք կարող են մասնագէտ չլինել այլ և այլ գործերում, միայն թէ նրանք հմուտ գործավարներ գտնեն: Բաւական է, որ այդ քննիչները քաղաքականապէս կայուն լինեն և խորհրդի գիծը չլքեն:

11. ՇԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Շինական խորհուրդը՝ շէնի բոլոր իրաւահաս քաղաքացիների, այսինքն՝ բոլոր 18 տարեկան հասակն առած աշխատաւորների ընդհանուր ժողովն է: Մէկ խօսքով՝ այդ զրեթէ միւլենոյն է, ինչ որ է շինական ժողովը, այն միակ

զանազանութեամբ՝ որ խորհրդում շէնի գեցը (կուլակը, կեղեքիչը) չկայ:

Շինական խորհուրդը ժողովում է կարիքին համեմատ, բայց շարաթը 2 անգամից ո՛չ պակաս՝ լսելու և լուծելու համար այն գործերը, որ իրանց իշխանութեամբ չէին կարող լուծել գործադիր կոմիտէի անդամները, ինչպէս՝ հողի բաժանումը, դպրոցի կառուցումը, նոր ուղիներ անց կացնելը, ընտրութիւնները և այլն:

Խորհուրդը ժողովում է աշխատանքից ազատ ժամանակը, և նրա անդամները ոչ մի վարձատրութիւն չեն ստանում:

Խորհուրդն իր միջից գործադիր կոմիտէ է ընտրում, թւով 3-ից մինչև 5 մարդ, որ փոխարինում է առաջան շինական տնօրէնին (սաարոստային) և կատարում է այն բոլոր ընթացիկ գործերը, որ նրան լսնանում է խորհուրդը իր մի նիստից մինչև միւսը:

Գործադիր կոմիտէի անդամները խորհրդից բռնիկ են ստանում այն նախահաշի համեմատ, որ կոմիտէից ներկայացւած է վոյստի խորհրդին: Թոնի չափը՝ տեղական կեանքի պայմանների համաձայն է որոշւում և այն հաշուով, որ գործադիր կոմիտէի անդամներն աւելի բռնիկ չստանան, քան իր գործը լաւ իմացող բանւորը:

Եթէ շէնը մեծ է և կարելի չէ իրաւասու քաղաքացիներ ընդհանուր ժողով կայացնել, այդ դէպքում պատգամաւորների շինական խորհուրդ է ընտրւում, ամեն մի 100 բնակչի վրայ մի մարդ հաշւելով, բայց 3 պատգամաւորից ո՛չ պակաս և 50 ից ո՛չ աւել (տ. 57 յօդ.):

Խորհրդի լիազօրութեան ժամանակամիջոցը 3 ամիս է:

12. ՎՈՂՈՍՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վոլոստի խորհուրդը նոյնն է, ինչ որ նախկին վոլոստի ժողովն էր, այն միակ զանազանութեամբ, որ նրա մէջ բացակայում է բուրժուազրիան՝ զիւղի ցեցը և՛ խանութպանը:

Վոլոստի խորհուրդն ընտրուում է վոլոստի բոլոր զիւղերի շինական խորհուրդներէց՝ շինական խորհրդի ամեն մի 10 անդամի վրայ 1 պատգամաւոր հաշուելով: 10 անդամից պակաս անկեցող խորհուրդները մէկ-մէկ ներկայացուցիչ են ուղարկուած (տ. յօդ. 53, կէտ 3):

Եթէ վոլոստի սահմաններում հանք, գործարան կամ գաւօք կայ, այդ ձեռնարկութիւնների բանւորներն ընտրութիւնները կատարում են իրենց գործավայրում աւելալ ձեռնարկութիւնների ընդհանուր ժողովներում: Վոլոստի կենտրոնում հաւաքուած բոլոր ընտրուած պատգամաւորներն կազմում են վոլոստի խորհուրդը:

Վոլոստի խորհուրդը 3 ամսով է ընտրուում, իսկ հրաւիրուում է ամիսը 1 անդամից Ե՛չ պակաս (տ. յօդ. 54) լուծելու համար Ե՛ջն խնդիրները, որոնք ընդհանուր են ամբողջ վոլոստին: Խորհրդի արտակարգ ժողովը պէտք է հրաւիրւի շինական խորհուրդների պահանջով, որոնք վոլոստի ազգաբնակչութեան մէկ երրորդականից պակաս չընդգրկեն: Խորհուրդն իր միջից գործադիր կոմիտէ է ընտրում 10 մարդուց ոչ աւելի (տ. յօդ. 55), որը և փոխարինում է առաջւան վոլոստնոյ զեմսկիյ վարչութեանը:

Բացի դրանից, վոլոստի խորհուրդը երեք մարդուց բաղկացած մի տեղական դատարան և մի զինւորական կոմիտարիատ է ընտրում՝ երկու քաղաքական կոմիտարիներից ու մէկ զինւորական մասնազէտից բաղկացած, որոնք յետոյ հաստատուում են դաւառական խորհրդից:

Վոլոստի խորհուրդը՝ խորհուրդների գաւառական և նահանգական համադումարների համար էլ ընտրութիւններ է կատարում: Այդ մասին մանրամասնորէն մենք յետոյ կխօսենք:

Վոլոստի խորհրդի անդամները մշտական բոնիկ չեն ստանում, այլ միայն նիստերին անցկացրած ժամանակի համար որոշ վարձատրութիւն է տրուում. աշխատանքից ազատ ժամանակը հաշւի մէջ չէ մտնում:

Գործադիր կոմիտէի անդամներն իրանց բոլոր ժամանակը վոլոստի գործերի վրայ են գործադրում և խորհրդից լիակատար բոնիկ են ստանում այն նախահաշւի համեմատ, որ վոլոստի խորհուրդը ներկայացնում է գաւառական խորհրդին: Դատարանի անդամները միայն նիստերի վրայ գործադրած ժամանակի համար են վարձատրուում:

Վոլոստի խորհրդի գործադիր կոմիտէն վոլոստում դերագոն գործադիր իշխանութիւնն է. նրա կարգադրութիւնները պարտաւորական են տեղական շէնքերի և զիւղերի բոլոր քաղաքացիների համար,

Վոլոստի խորհրդի գործադիր կոմիտէն հետեւեալ մասերի է բաժանուում.

1) Վարչական բաժանմունքը հսկում է հասարակական կարգին և բարեշինութեանը, ծնունդների, ամուսնութիւնների և մահերի ցուցակագրութիւնն է անում և միւս խորհուրդների հետ կապ է պահպանում: Նրա անմիջական կառավարութեան տակ է գտնուում նաև վոլոստի պահնորդութիւնը՝ միլիցիան, նա էլ հէնց հետամուտ է լինում փոստին, հեռագրատանը, բուժարաններին, տեղական առևտրին և արտադրութեանը:

2) Հողաչին բաժանմունքը հսկում է հողի, անտառի և ջրի բաժինների բաշխմանը, վարելահողի, սերմացանքսին և նպարաւորմանը:

3) Փինանսական (եյեմտային) բաժանմունքը հետևում է, որ հարկերը կանոնաւոր կերպով բաշխւեն, ճշտութեամբ հաւաքւեն և՛ թէ վոլոստն ինչպէս է ծախսում իր արամադրութեան տակ եղած գումարները:

4) Ժողովրդական լուսաւորութեան բաժանմունքը հետևում է զարոյցներին, ընթերցարաններին, զրադարաններին և ժողովարաններին (կլուբներ), սարքում է խելացի զարնութիւններ և այլն:

Բացի դրանից, գործադիր կոմիտէին կից գործում են

վորստի խորհրդից ընտրված հետևեալ հաստատութիւնները.

5) 3 անձից կազմված մի դատարան, որ հսկում է նաև բանաերին:

6) 3 անձից մի զինւորական կոմիտարիատ, որ հսկում է զորացրման (զեմորիլիզացիային) և նոր սոցիալիստական զորքի ստեղծման:

13. ԳԻՒՂԱՔԱՂԱՔԻ (ՊՈՍԵԼԿՈՎԻՅ) ԽՈՐՀՈՒՐԴԸ

Այնտեղ, որտեղ զիւղաքաղաքի վարչութիւնն կտր, որ չէր մտնում վոլոստի մէջ, զիւղաքաղաքի խորհուրդներ են ստեղծւում:

Գիւղաքաղաքի խորհուրդը՝ զիւղաքաղաքի բոլոր 18 տարեկան հասակն առած աշխատաւոր քաղաքացիների ընդհանուր ժողովն է: Կենարոնական կոմիտէն 3 ամսով է ընտրւում, և միւս մնացածներում զիւղաքաղաքի խորհուրդը հաւասարեցնւում է վոլոստի խորհրդին:

Եթէ զիւղաքաղաքը մեծ է, և մի ընդհանուր ժողովում ընտրութիւնները կարելի չէ կատարել, մի շարք ժողովներ են կազմեցնւում ըստ թաղերի կամ զիւղամասերի՝ զիւղաքաղաքի պատգամաւորների խորհուրդ ընտրելու համար:

Այդ հիմունքների վրայ է ստեղծւում խորհրդի իշխանութիւնը նաև աւաններում (մեսաեչկա), ստանիցաներում և շաատից գուրս գանւող քաղաքներում:

14. ԳԱՒԱՌԱԿԱՆ (ՐԱՅՈՆԱԿԱՆ) ԽՈՐՀՈՒՐԴԸ

Գաւառական խորհուրդը շինական խորհուրդների ընտրած պատգամաւորների համագումարն է: Նրան մասամբ կարելի է համեմատել առաջւան գաւառական ղեմակից ժողովի հետ:

Գաւառական խորհուրդն ընտրւում է՝ ամեն մի 1000 բնակչի վրայ 1 պատգամաւոր հաշւելով, բաց 300-ից ոչ աւելի ամբողջ գաւառի կամ բայոնի վրայ: 1000-ից պակաս բնակչի ունեցող տեղերի շինական խորհուրդները միանում են գաւառական համագումարին պատգամաւորներ ընտրելու համար:

Համագումարի համար ընտրւում են նաև 10.000-ից պակաս բնակչի ունեցող քաղաքների խորհուրդները (ա. յօդ. 53, գ և դ կէտերը):

Ընտրութիւնները միշտ կատարւում են նախընթաց համագումարի սահմանած կանոններով:

Գաւառական խորհուրդն ընտրւում է 3 ամիս ժամանակամիջոցով և հրաւիրւում է դործադիր կոմիտէի հայեցողութեամբ և կամ գաւառի աղգարնակութեանը (մէկ երրորդից ոչ պակաս) խորհուրդների պահանջով:

Համագումարի իրաւասութեան մէջ հետևեալ հարցերն են մտնում.

1) Գործադիր կոմիտէի ընդհանուր քաղաքական հաշիւն իր գործունէութեան մասին և իր աշխատանքի չետադայ ուղղութիւնը:

2) Այն հարցերը, որոնք քննութեան են առաջարկւած խորհուրդների բարձրագոյն իշխանութեան կողմից:

3) Գաւառի մուտքի և ծախսի նախահաշիւ քննադատութիւնն ու հաստատութիւնը:

4) Նոր հարկերի սահմանումը:

5) Հողային, սնտեսական և քաղաքակրթական հարցեր:

6) Վոլոստի խորհուրդներից ընտրւած զինւորական կոմիտարիների հաստատութիւնը:

7) Ընտրութիւն գաւառի զինւորական կոմիտարիատի՝ երկու քաղաքական ղեկավարներից և մէկ զինւորական մասնագէտից բաղկացած:

8) Գաւառական գատարանի ընտրութիւնը՝ 3 հոգու կազմով:

9) Նահանգական և համառուսական համագումարների պատգամաւորների ընտրութիւնը:

10) Գործադիր կոմիտէի ընտրութիւնը:

11) Զանազան ուրիշ հարցեր:

Գաւառական խորհրդի բոլոր վճիռները դաւառի բոլոր քաղաքացիների համար օրէնքի ոյժ ունեն, իսկ նրանց չկատարելու դէպքում՝ մեղաւորներն ենթարկուում են չեղափոխական դատաստանի:

Գաւառի բոլոր խորհուրդները ենթարկուում են Գաւառական խորհրդին և չեն կարող նրա վճիռներին հակառակ դնալ: Միայն զուտ տեղական խնդիրներին Գաւառական խորհուրդը չէ՛ միջամտում:

Համագումարի ամենակարեւոր խնդիրներից մէկը՝ դաւառի հարկերի որոշումն է: Համագումարից հաստատուած հարկերը կենանքի մէջ են մանոււմ վոլոսաների խորհուրդների միջոցով, որոնք իրանք իրաւունք չունեն հարկեր դնելու: (Միայն ժամանակաւորապէս, քանի Ղաւառական համագումարները դեռ չեն որոշել այդ հարկերը, վոլոսաների խորհուրդները կարող են նաև ինքնազուխ գործել):

Գաւառական համագումարի հրաւիրուած տեղի պէտք է ունենայ նահանգական և համառուսական համագումարների նախօրեակին, այնպէս որ այդ համագումարների համար ընտրութիւնները կարողանան կայանալ առանց միջոցների և ժամանակի աւելորդ վատնումի:

Իր պտրապմունքներն աւարակելուց յետոյ՝ համագումարը յրւում է, իսկ ընթացիկ գործերը վարելու համար գործադիր կոմիտէ է ընտրում:

Գործադիր կոմիտէն ընտրուում է ո՛չ աւելի քան 20 հոգու կազմով: Անհրաժեշտութիւն չկայ, որ անպատճառ ամեն մի վոլոստից մի ներկայացուցիչ լինի: Պարզապէս պէտք է ընդհանուր թւից ամենաընդունակ մարդկանց ընտրել, թէկուզ այդ կարգով գործն այնպէս բերի, որ մի որ

և է վստա՝ գործադիր կոմիտէին երկու և նոյն իսկ երեք անգամ տայ:

Ընտրութիւնները պէտք է Ֆրակցիաներով կատարել, սրա հետ կարելի է գործադիր կոմիտէի համար թեկնածուներ նախանկատել նաև ոչ պատգամաւորների շարքից, միայն թէ համագումարը նրանց հաստատէ: Թէ ամեն մի ֆրակցիայի վրայ քանի ընտրելի մարդ է դալիս՝ այդ կախած է համագումարում գտնուող ամեն մի կուսակցութեան կողմնակիցների թւից:

Այդ կերպով ընտրուած գործադիր կոմիտէն իւր միջոց ընտրում է մի նախագահ, մի փոխ-նախագահ ու մի բարտուղար: Յետոյ կոմիտէն բաժանուում է հատուածների կամ բաժանմունքների, որոնք փոխարինում են հին, փլթած կառավարչական հաստատութիւններին:

Առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել վարչական բաժանմունքի կանոնաւոր կազմակերպութեան վրայ:

Այդ բաժանմունքը՝ մի կողմից՝ մնացած բաժանմունքների գործն է միացնում ու համաձայնեցնում, իսկ, միւր կողմից, տեղական խորհրդի իշխանութիւնը կապում է կենտրոնականի հետ, օդնելով նրան՝ միացնել և մի ընդհանուր ծրագրով վարել մեր ամբողջ հանրապետութեան կառավարութիւնը: Այդ դէպքում միայն մեր երկիրը ոչ թէ բաժանբաժան խորհուրդների մի խառնիխուռը կոչու կլինի, այլ բանւորների և զիւղացիների մի ամբողջական, հզօր և անպարտելի խորհրդային հանրապետութիւն:

1) Վարչական բաժանմունքը 4 ստորաբաժանմունքների (подотдел) է բաժանուում:

ա) Ընդհանուր ազժինի ստորացիայի ստորաբաժանմունքը՝ կառավարչի անմիջական ղեկավարութեամբ՝ չեղափոխական կարգերի, բանւորների և զիւղացիների ապահովութեանը և իրաւունքներին պահապան է կանգնած: Վարում է յարաբերութիւնները կենտրոնական խորհրդային

իշխանութեան և ուրիշ խորհուրդներ ղ հեա. հսկում է հրօ-
վարտակների (գեղերեանների) և խորհրդային իշխանութեան
բարձրագոյն օրգանների կարգադրութիւնների կանոնաւոր
կատարման վրայ. նախապատրաստում ու հրաւիրում է խոր-
հուրդների համազումարները և հետևում է, որ խորհուրդները
ընտրութիւնները կանոնաւոր լինեն. հետևում է մամուլին,
անօրինում է հանրապետութեան քաղաքացիութեան մէջ ըն-
դունելու և նրանից դուրս դալու գործը. պաշտօնական
վկայականներ ու անցաթղթեր է տալիս և ստուգում. ցու-
ցակազմում ու հետևում է տեղական հացկատակներին (պարա-
զիաներին)՝ բոլր հուսկային և գատարկաշրջիկներին (բո-
սեակներին) և այլն:

բ) Տեղեկատու - հրահանգչական (ինֆորմացիոն — ին-
ստրուկտորական) ստորաբաժանմունքը հոգս է տանում, որ
ազգարնակչութեան մէջ խորհրդային իշխանութեան գեղերեա-
ների և գործողութիւնների մասին ստույգ տեղեկութիւններ
տարածեն բանաւոր և ապագրական խօսքի միջոցով, ինչպէս
նաև սխտեմատիկ կերպով տեղեկութիւն է տալիս կենտրո-
նական իշխանութեանը տեղական խորհուրդների գործու-
նէութեան և տեղական դրութեան մասին. ազիտատորներ
ու ինստրուկտորներ (հրահանգիչներ) է ուղարկում խորհուրդ-
ներին տեղեկութիւններ հազորելու և գործը կանոնաւոր
հիմքերի վրայ գնելու համար, ինչպէս նաև վերահսկութեան
և ընդհարումների քննութեան համար:

դ) Խորհրդային միլիցիայի ստորաբաժան-
մունքը գործում է այն չափով օրէնքի համաձայն, որ
հրատարակած է Կենտրոնական իշխանութիւնից:

զ) Տակա-չեղափոխութեան, սպեկուլեացիայի
և պաշտօնեաների չանցանքների դէմ կուլելու
ստորաբաժանմունքը գործում է համապատասխան
Կենտրոնական սեկրետարիատի սահմանին օրէնքի:

2) Փինանսների բաժանմունքը գործադիր կո-

միա էի ընդհանուր հաշւապահութիւնն է վարում, տարեկան
ելեմտից նախահաշիւն է կազմում, վերահսկում է՝ որ բա-
ժանմունքներն իրանց արւած վարկերը կանոնաւոր կերպով
ծախսեն, հարկերն է հաշի առնում և ստանում. հարկային
տեսչութիւնը, եկամուտների աղբիւրներն է կառավարում և
այլն:

3) Զինւորական բաժինը դրադում է զինւորացու-
ների ցուցակազմութեամբ, հանրապետութեան զինւորական
ոլթերի կազմակերպութեամբ, ինչպէս նաև նրանց պարենա-
ւորումով, զինւորական վարժութեամբ, զաւառական և վո-
լստալի խորհուրդների զինւորական բաժանմունքների կօնսոր-
լով, ազիտացիայով և քաղաքակրթական — լուսաւորական գոր-
ծունէութեամբ գործերի մէջ և այլն:

4) Արդարադատութեան բաժինը հսկում է չե-
ղափոխական տատաններին և դատարաններին, հասարակական
պաշտպանների միութեան, քննիչ յանձնաժողովներին, հանրա-
մատչելի իրաւաբական օգնութեան, նօտարական գրասենեակ-
ներին, ծնունդների, մահերի և ամուսնութիւնների ցուցակազ-
րութեանց, արգարադատութեան կենտրոնական կոմիտա-
րիատի հրովարտակների գործադրութեան, բանտերին և այլն:

5) Ժողովրդական լուսաւորութեան բաժինը
դրադում է դպրոցներով, միջդպրոցական և արտադպրոցա-
կան ուսումով և դաստիարակութեամբ, ինչպէս ընդհանուր,
այնպէս էլ մասնազիտական. այս մասին վերաբերող բոլոր
դիտական, կրթական, ղեղարկեստական նշանակութիւն ու-
նեցող հաստատութիւններով, ինչպէս նաև զւարնութեանց
տեղերով, ուսուցչական դասի ցուցակազրութեամբ ու տեղա-
ւորումով, ուսանողական կազմակերպութիւններով և այլն:

6) Ժողովրդական տնտեսութեան բաժան-
մունքը կամ խորհուրդն արդիւնաբերական ձեռնարկու-
թիւններն է հաշի առնում, հսկում է նրանց վրայ, հում
նիւթ ու վառելիք է հասցնում նրանց, վարում ազգայնացրած

ձեռնարկութիւնները, մթերքներն է հաշոււմ ու բաշխոււմ, նոր արդիւնաբերական ձեռնարկութիւններ է կազմակերպոււմ, հասարակական շինութիւնների կառուցմամբ է զբաղոււմ և այլն:

7) Հոգալին բաժանմունքն զբաղոււմ է հողերի, անտառների, շրերի ցուցակագրութեամբ ու նրանց բաշխոււմով, շինական անտեսութեամբ ու շինական կոմմունիանների կազմակերպութեամբ, կուլտուրական կալւածքներով և զիւզատեստեսական գիտութիւններ, մեքենաներ ու զործիքներ տարածելով և այլն:

8) Աշխատանքի բաժանմունքը զբաղոււմ է բանւորների և ձեռնարկողների փոխադարձ յարաբերութիւններով, զործարանային տեսչութեամբ, բանւորական կոնսուլտի, բանւորական ապահովագրութեամբ, աշխատանքի բորսայով, անգործների համար կազմակերպուած հասարակական աշխատութիւններով, պրոֆեսիոնալ միութիւններով, արդիւնաբերական կոմմունիաններով և արտելներով, բանւորներին բնակարաններ յատկացնելով, զրահանութեամբ և դասընթացներ ձիջոցով պրոֆեսիոնալ գիտութիւններ տարածելով և այլն:

9) Պարենաւորման բաժանմունքը զբաղոււմ է մթերքների, պաշարի և առաջին կարգի անհրաժեշտութիւն ունեցող առարկաների ցուցակագրութեամբ, պատրաստութեամբն ու բաշխութեամբ, սպառողական կօօպերատիւներով, ալիւրի ջրաղացներով, սպառողական նորմեր է հաստատոււմ և այլն:

10) Ճանապարհային—շինարարական բաժանմունքը զբաղոււմ է հողուղիներով և խճուղիներով, նրանց շինութեամբ ու վերանորոգութեամբ, երթևեկութեամբ, միջոցների կազմակերպութեամբ, ձիաքարշ փոստով, ուղեհարկով և այլն:

11) Սոցիալական ապահովացման բաժանմունքը զբաղոււմ է ժամանակաւոր կամ մշտական օժանդակութիւն տալով բոլոր աշխատութեան անընդունակներին

և առհասարակ հասարակական օգնութեան կարօտ անձանց վերանորոգոււմ է հին «անկեղանոցները», «աղքատանոցները» և այլն. հասարակական օգնութեան նոր հաստատութիւններ է ստեղծոււմ և այլն:

12) Առողջապահութեան բաժանմունքը զբաղոււմ է բժշկական օգնութեամբ, հիւանդանոցներով, սանատորիաներով, ամբուլատորիաներով և այլն. բժշկական - առողջապահական վերահսկողութեամբ, համաճարակների դէմ կրուելով ու համապատասխան լուսաւորող աշխատանք կատարելով ազգայնակութեան մէջ, բժշկական դասի թւահամարովն ու նրանց բաշխութեամբ և առողջապահական խմբերի կազմակերպութեամբ բժշկական միջոցների ցուցագրութեամբ, ազգայնացրած դեղատներով և այլն:

13) Պետական վերաստուգման բաժանմունքը զբաղոււմ է խորհուրդների ու նրանց բաժանմունքների, խորհրդային բոլոր հաստատութիւնների, բանկերի, զանձարանների, ազգայնացրած ձեռնարկութիւնների կառավարութեանց և այլ բոլոր ֆինանսական զործողութիւնների վերաստուգութեամբ:

Մի քանի բաժանմունքների զործունէութիւնն անհրաժեշտաբար կցորդոււմ է, նոյն իսկ մասամբ կարող է զուգահիւլել: Նրանց իրաւասութեան սահմանների ճշտորոշուծը պիտի լինի տեղական հանդամանքների համապատասխան: Բայց անպայման կերպով պէտք է պահել այստեղ ցոյց տրուած աշխատանքների գասււորութիւնը:

Ի դէպ նկատենք՝ որ փոստի, հեռագրատան և հեռախօսի վարչութիւնը՝ համապատասխան կենտրոնական կոմիտարիատին է վերաբերոււմ: Այդ հիմնարկութիւններից միայն զուտ տեղական բնաւորութիւն ունեցողները՝ ինչպէս օր. բազաբային հեռախօսը կամ տեղական փոստն են մնոււմ տեղական խորհրդի ղեկավարութեան տակ: Գործերի կոմիտէն ընդհանուր առմամբ պէտք է կատարէ նախ այն գործը, որ առաջ

տեղական վարչութիւնն էր տանում, իսկ երկրորդ՝ այն, ինչ որ նախկին պաշտօնեաներն ու գատաւորներն էին կատարում: Ինքնըստինքեան հասկանալի է, որ բոլոր այդ աշխատանքները այժմ բոլորովին նոր ձևով են կատարւում:

Գաւառական խորհրդի գործադիր կոմիտէն գերազույց իշխանութիւնն է գաւառում՝ մի համադրւածարից մինչև միւս համադրւածարը, և նրա ամեն մի կարգադրութիւնը պէտք է առանց հակահաստատեան կատարւի գաւառի քաղաքացիներէից:

Գործադիր կոմիտէն վոլոստին և շինական խորհուրդներին միջոցներ է հասցնում այն դրամարներէից, որ նա ստանում է իր հաւաքած հարկերից և պետական շրամարկից:

Իրամը տրւում է վոլոստի խորհուրդներին՝ միայն ծախքերի նախահաշիւը ներկայացնելուց յետոյ:

15. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քաղաքային խորհուրդը՝ գաւառական՝ շտապից դուրս՝ ու նահանգական քաղաքների և մայրաքաղաքի բանւոր ազգանակութիւնից ընտրւած պատգամաւորների ժողովն է:

Քաղաքային խորհուրդն ընտրւում է այն հաշւով, որ ամեն մի 1.000 բնակչին 1 պատգամաւոր գայ, բայց 50 անգամից ո՛չ պակաս և 1.000-ից ո՛չ աւել: 10.000-ից պակաս բնակիչ ունեցող քաղաքներում այդ նորման իջնում է մինչև 100-ին՝ 1 (տ. յօդ. 57):

Մեծ քաղաքներում թաղական քաղաքային խորհուրդներ են գոյանում, որոնք ենթարկւում են անմիջապէս քաղաքային ընդհանուր խորհրդին:

Քաղաքային խորհուրդն ընտրւում է 3 ամսով, իսկ հրաւիրւում է ո՛չ պակաս, քան շաբաթը 1 անգամ: Խորհրդի արտակարգ ժողովը կարող է հրաւիրւել գործադիր կոմիտէի որոշմամբ կամ խորհրդի անդամների կէսի պահանջով:

Քաղաքային խորհրդի գործադիր կոմիտէն ընտրւում է

այն հաշւով, որ խորհրդի ամեն մի 40 անդամին գայ 1 մարդ, բայց թւով ո՛չ պակաս՝ քան 3, և ո՛չ աւել՝ քան 15:

Քաղաքային խորհուրդն՝ առաջւայ քաղաքային դրաման է, այն զանազանութեամբ՝ որ նրա մէջ բացակայում են բոլր ժուազիայի ներկայացուցիչները:

Խորհրդի Գործադիր կոմիտէն կարելի է նմանեցնել առաջւան քաղաքային վարչութեանը:

Քաղաքային խորհուրդը նոյնպիսի բաժանմունքների է բաժանւում, ինչպէս և գաւառականը, դուրէ թէ հողային բաժանմունքի բացառութեամբ:

16. ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Նահանգական խորհուրդը՝ վոլոստների և քաղաքների խորհուրդների ընտրած պատգամաւորների համագումարն է:

Համագումարի ներկայացուցիչներն ընտրւում են այն հաշւով, որ վոլոստի բնակիչներից ամեն մի 10.000-ին գայ 1 մարդ և քաղաքի ընտրողներից ամեն մի 2.000 ին 1-ը, բայց ո՛չ աւել, քան 300 պատգամաւոր ամբողջ նահանգի կամ շրջանի համար (տ. յօդ. 53, կէտ բ):

Եթէ գաւառական համագումարը նահանգականի նախորեակին է կայանում՝ գաւառական համագումարի ընտրութիւնները կատարւում են միևնոյն նորմայով:

Նահանգական խորհուրդն ընտրւում է 3 ամիս ժամանակամիջոցով և հրաւիրւում է միևնոյն կարգով, ինչպէս և գաւառականը:

Նահանգական համագումարը կարելի է հաւասարեցնել առաջւայ նահանգական ղեմսկիլ ժողովին:

Նահանգական խորհուրդը և նրան փոխարինող գործադիր կոմիտէն գերազույց իշխանութիւնն է նահանգում և նրանց կնիւնները պարտաւորական են գաւառական և վոլոստի

խորհուրդների համար, նմանապէս և բոլոր քաղաքացիների համար:

Նահանգական խորհուրդը հետեւեալ ծրագրով է զոր-
ծում:—

1) Նահանգական գործադիր կոմիտէի ընդ'անուր քաղա-
քական հաշուետուութիւն և նրա դործունէութեան յետազոյ
ուղղութիւնը:

2) Հարցեր՝ որոնք քննութեան են առաջարկած բարձ-
րագոյն խորհուրդների իշխանութիւնից:

3) Նահանգի էլ և մուտքի նախահաշի քննադատու-
թիւնն ու հաստատութիւնը:

4) Հողերից և անտառներից օգտուելու կտրգի սահ-
մանումը:

5) Այն բոլոր հարցերի լուծումը, որոնք ծագել են տնտե-
սական և կուլտուրական հողի վրայ, ինչպէս՝ ճանապարհ-
ների, պարենաւորման, դպրոցների, բուժարանների մասին
և այլն:

6) Այն բոլոր վիճելի հարցերի լուծումը, որոնք ծագել
են նոր դաւառների սահմանաբաժանման կամ այդ դաւառ-
ների սահմանափոխման ժամանակ:

7) Գաւառական խորհուրդների ընտրած զինւորական
կոմիտարիատների հաստատութիւնը և կոմիտարիատի անդամ-
ներից մէկին զինւորական կոմիտար (զինւորական կոմիտա-
րիատի վարիչ) նշանակելը:

8) Նահանգական զինւորական կոմիտարիատի համար
երկու քաղաքական կոմիտարի ընտրութիւնը ¹⁾:

9) Գործադիր կոմիտէի ընտրութիւնը:

10) Նահանգական, շրջանային կամ համառուսական համա-
դումարների համար պատգամաւորներ ընտրելը:

Նրանց պարապմունքները աւարտելուց յետոյ, համագու-

1) Զինւորական մասնագէտը Կենտրոնական զինւորական կոմիտարիատից է
նշանակուած:

մարի անդամները ջրուում են, ընթացիկ գործերի վարումը
յանձնելով Գործադիր կոմիտէին:

Գործադիր կոմիտէն ընտրուում է 25 մարդուց ոչ աւելի
թւով: Նա իր միջից նախագահ, փոխ-նախագահ և քարաու-
ղար է ընտրում:

Նահանգական գործադիր կոմիտէն կազմակերպելով մի-
ևնոյն բաժանմունքները, ինչպէս և գաւառական գործ. կոմիտէ՝
օկտում է գործեր: Գլխաւոր ուղղութիւնը կոմիտէն դար-
ձնում է վարչական բաժանմունքի վրայ և կապ հաստա-
տում ինչպէս ստորագրեալ խորհուրդների, այնպէս էլ
կենտրոնական իշխանութեան հետ:

Վերացում են բոլոր առաջւան նահանգական հաստա
տութիւնները, ինչպէս և գաւառներում՝ գաւառականները,
նրանց անփոփոխ անդամներով, կառավարութիւններով,
վարչութիւններով: Բայց պէտք է կարելի եղած չափով
օգտուել այդ հաստատութիւնների պատրաստի մեքենայից:

Հին զինւորներից կարելի է թողնել միայն ամենա-
անհրաժեշտներին և խորհրդային իշխանութիւնն անվերա-
պահօրէն ընդունողներին:

Նահանգական Գործադիր կոմիտէն բոլոր վարկերը ստա-
նում է Կենտրոնական կոմիտարիատներից և բաժանում գա-
ւառների մէջ համագումարի սահմանած նախահաշի համեմատ:

Նահանգական խորհրդից ոչոք զրամ չպէտք է բաց
թողնի: Եւ նահանգական գործադիր կոմիտէն պէտք է զի-
տենայ, որ բոլոր այն դէպքերում, երբ զանձարաններում
չբաժանական նշաններ չկան, կամ երբ տեղական կարիքների
համար բաց թողնուած վարկը պակաս է, նա ինքը պէտք է
դիմէ Կենտրոնական իշխանութեանը, և ո՛չ թէ գաւառների
կամ վոյստներէ ընկերներին այնտեղ ուղղէ:

17. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Շրջանային խորհուրդը՝ մի որոշ շրջանի քաղաքային և գաւառական խորհուրդների ընտրած պատգամաւորների համագումարն է:

Այնտեղ, ուր ամբողջ նահանգներում գլխաւորապէս մէկ ազգութիւն է ապրում, ինչպէս օրինակ՝ Ուկրաինայում կամ Փինլանդիայում, կամ ուր նահանգները բնականաբար միացած են առանձնապատուկ կենցաղով և աշխարհագրական դիրքով, ինչպէս օրինակ՝ Թուրքեստանը, Սիբիրը և Կովկասը, այնտեղ կարելի է Շրջանային խորհուրդներ կազմակերպել: Եթէ այդպիսի առանձնապատուկ պայմաններ չկան, շրջանային խորհուրդներ հարկաւոր չէ կազմել:

Որքան քիչ շրջաններ լինեն՝ այնքան լաւ է, որովհետեւ կենտրոնի և նահանգի միջև աւելորդ միջնորդ օղակ չի լինի, ոչ էլ ոչժերի աւելորդ վտանգում կլինի շրջանների հաստատութիւնների վրայ:

Շրջանային խորհրդի պատգամաւորներն ընտրւում են այն հաշւով՝ որ գաւառի ամեն մի 25.000 բնակչին դոյ 1 իսկ քաղաքներից՝ ամեն մի 5000 ընտրողին դոյ 1 պատգամաւոր, իսկ ո՛չ աւելի քան 500 ամբողջ շրջանի համար (տ. յօդ. 53, կէտ ա.):

Եթէ շրջանային համագումարից անմիջապէս առաջ նահանգականն է կայանում, վերջինն էլ ընտրւում է պատգամաւորներին:

Համագումարը՝ ոչ աւելի քան 25 հոգի՝ զործադիր կոմիտէ է ընտրւում, որը և որոշ շրջանի իշխանութիւնն է հանդիսանում:

Շրջանի զործադիր կոմիտէն անմիջապէս ենթարկւում է Կենտրոնական Գործադիր Կոմիտէին և Ժողովրդական Կոմիտարների Խորհրդին:

18. ՀԱՄԱՌՈՒՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Բանւորների, դիւղացիների և կողակների պատգամաւորների խորհուրդների համառուտական համագումարը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդների Հանրապետութեան Բարձրագոյն Իշխանութիւնն է:

Համայն Ռուսաստանի Համագումարի համար գելեդատներն (փոխանորդները, ներկայացուցիչները) ընտրւում են քաղաքային խորհուրդներից այն հաշւով՝ որ ամեն մի 25000 ընտրողին դոյ 1, իսկ նահանգական համագումարներից այն հաշւով, որ ամեն մի 125.000 բնակչին դոյ 1 (տ. յօդ. 25):

Եթէ նահանգական համագումարը Համայն Ռուսաստանի Համագումարից անմիջապէս առաջ չէ կապուցել, պատգամաւորներն ընտրւում են գաւառական համագումարներից: Իսկ եթէ նրան անմիջապէս նախընթաց եղել է շրջանայինը՝ վերջինն էլ ընտրւում է պատգամաւորներին:

Համայն Ռուսաստանի Համագումարը հրաւիրւում է ո՛չ սակաւ, քան տարին 2 անգամ Կենտրոնական Գործադիր Կոմիտէի քործամբ կամ Հանրապետութեան ամբողջ ազգաբնակչութեան մէկ երրորդից ո՛չ պակաս մասն ընդգրկող խորհուրդների պահանջով (տ. յօդ. 26 և 27):

Համայն Ռուսաստանի Համագումարի կառավարութեան իրաւասութեանն են ենթարկւում համապետական նշանակութիւն ունեցող խնդիրները՝ ինչպէս՝

- 1) Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի և Կենտրոնական Գործադիր Կոմիտէի ընդհանուր քաղաքականութեան հաշւետւութիւնը.
- 2) Խորհուրդների Հանրապետութեան հիմնական օրէնքները.
- 3) Հանրապետութեան պետական բիւջէն (եւ և մուտքի հաշիւը).

4) Արտաքին քաղաքականութեան, պատերազմի և խաղաղութեան հարցերը.

5) Զօրքը և նաւատորմիդը.

6) Հարկային ու գրամական սիստեմը.

7) Հանրապետութեան ժողովրդական անտեսութեան և նրա առանձին ճիւղերի ընդհանուր պլանը.

8) Փեղերացիայի առանձին մասերի վիճելի հարցերը և նոր շրջանների հաստատումը.

9) Կենտրոնական Գործադիր Կոմիտէի ընտրութիւնները.

10) Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի վերընտրութիւնը մասամբ կամ ամբողջովին:

Սահմանադրութեան հիմնական սկզբունքները օահմանելու և փոփոխելու իրաւունքը, ինչպէս նաև հաշտութեան դաշինքներ հաստատելու իրաւունքը՝ բացառապէս Համայն Ռուսաստանի Համագումարին է պատկանում: Սահմաններ դնելու և փոփոխելու, հանրապետութեան տերիտորիայի մի մասը, կամ նրան պատկանած իրաւունքն օտարապատական զարձնելու, պատերազմ չայանելու և հաշտութիւն կնքելու իրաւունքն էլ նմանապէս Համայն Ռուսաստանի Խորհուրդների Համագումարին է պատկանում և միմիայն նրա հրաւիրւելու անկարելիութեան դէպքում է թողնուում Կենտրոնական Գործադիր Կոմիտէին:

(Խորհուրդների Համայն Ռուսաստանի Համագումարի իրաւահաստութեան խնդիրների մասին մանրամասն ա. սահմանադրութեան յօդուածներ 49—52):

Պարապմունքներն աւարտելուց յետոյ՝ Համագումարը յրւում է, ամբողջ գործը յանձնելով Կենտրոնական Գործադիր Կոմիտէին, որն էլ փոխարինում է նրան մէկ համագումարից մինչև միւսը:

19. ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԷՆ

Համայն Ռուսաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէն Հանրապետութեան մէջ Մայրաքոյն օրէնսդրական, կարգադրիչ և վերաստուգիչ հաստատութիւնն է: Իր լիակազմ ժողովներում նա օրէնսդրութիւն է անում, իր բաժանմունքներում (ժողովրդական կոմիսարիատներում) նա կառավարութեան ընթացիկ գործն է վարում:

Կենտրոնական Գործադիր Կոմիտէն կապում է և ուղղութիւն է տալիս երկրի բոլոր խորհրդային հաստատութիւնների գործունէութեանը՝ ինչպէս նաև հսկում է, որ կատարւեն հանրապետութեան բարձրագոյն խորհուրդների իշխանութեան դեկրետներն ու կարգադրութիւնները:

Կենտրոնական Գործադիր Կոմիտէն ընտրւում է 200 անգամից ոչ աւելի թւով կուսակցական ցուցակների համեմատ և այն հաշուով՝ որ ժողովրդական կոմիսարների խորհրդի ապագայ կազմն էլ նրա մէջ մտնէ: Համայն Ռուսաստանի մէկ համագումարից մինչև միւսը տեղ միջոցում՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտէն փոխարինում է համագումարին և իշխանութեան բարձրագոյն օրգանն է հանդիսանում:

Նրա իրաւասութեան սահմանները նայեն են՝ ինչ որ Համայն Ռուսաստանի Խորհուրդների Համագումարինը՝ նախընթաց պիտում չիշւած բացառութիւններով:

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի և նրա բաժանմունքների ժողովրդական կոմիսարիատները կազմելու իրաւունքը պատկանում է Կենտրոնական Գործադիր Կոմիտէին:

20. ԺԱՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութեան Կառավարութիւնն է:

Նա և՛ օրէնքներ հրատարակելու, և՛ կառավարելու իրաւունք ունի: Բայց իր ամբողջ գործունէութեան համար նա պատասխանատու է Կենտրոնական Գործադիր Կոմիտէի և Համայն Ռուսաստանի Խորհուրդների Համագումարի առաջ: Նրա հրատարակած պեկրետներն ու որոշումները հաստատուած են Կենտրոնական Կոմիտէից կամ Համագումարից, որոնք իրաւունք ունեն կասեցնելու կամ բեկանելու Խորհրդի ամեն մի վճիռը (տ. յօդ. 37 — 41):

Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի ամեն մի անդամը մի առանձին կոմիտարիատի զուխ է հանդնած, ընդամենը 19 կոմիտարիատ է կազմուած: Ներկայուած ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը հետեւեալ անձներից է բաղկացած.—

- 1) Խորհրդի նախագահ—Լենին (Ուլիանով)
- 2) Արտարն գործերի կոմիտար—Չիչերին
- 3) Ներքին գործերի կոմիտար—Պետրովսկի
- 4) Զինուորական գործերի կոմիտար—Տրոցկի
- 5) Ծախսերի գործերի կոմիտար—Տրոցկի
- 6) Ֆինանսների կոմիտար—Գուկոսկի
- 7) Արդարադատութեան կոմիտար—Ստոլչկա
- 8) Աշխատանքի կոմիտար—Շլեսայնիկով
- 9) Սոցիալական ապահովութեան կոմիտար—Վինոկուրով
- 10) Ժողովրդական լուսաւորութեան կոմիտար—Լուենաչարսկի
- 11) Փոստի և հեռագրի կոմիտար—Պոզրեկսկի
- 12) Ազգային գործերի կոմիտար—Ստալին
- 13) Ճանապարհների հսկողականութեան կոմիտար—Նեվսկի
- 14) Երկրագործութեան կոմիտար—Սերեզա
- 15) Վահագանութեան և արդիւնաբերութեան կոմիտար—Բրոնսկի (կոմիտարի տեղակալ)

- 16) Ժողովրդական պարենաւորման կոմիտար—Յիւրուպա
- 17) Պետական կոնարոլի կոմիտար—Լանդեր
- 18) Ժողովրդական տնտեսութեան բարձրագոյն խորհրդի կոմիտար—Րիկով
- 19) Առողջապահութեան կոմիտար—Սեմաշկո:

Կենտրոնական Գործադիր Կոմիտէի բաժանմունքների՝ ժողովրդական կոմիտարիատների՝ կառավարութիւնը մի անձի գործ չէ. այլ հաւաքական գործ: Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի որոշմամբ մի քանի ընկերներից կազմուած մի խումբ կառավարում է ամեն մի կոմիտարիատ: Սակայն այդ կոլլեգիայի նախագահը, ժողովրդական կոմիտարն իրաւունք ունի մենակ էլ վճիռներ կայացնել, այդ մասին տեղեկութիւն տալով կոլլեգիային (տ. յօդ. 45):

Ժողովրդական կոմիտարների կարգադրութիւններն, իրեն ժողովրդական բարձրագոյն լիազօրների կարգադրութիւններ, պարտաւորական են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհուրդների Հանրապետութեան բոլոր խորհուրդների և բոլոր բաղաբացիներին համար առանց բացառութեան:

Այդ կարգադրութիւնների հանոնաւորութեանը հսկում է Կենտրոնական Գործադիր Կոմիտէն և ամբողջ ժողովուրդը, որովհետեւ ժողովրդական կոմիտարների ամբողջ գործը ամենքի աչքի առաջ է: Եթէ մի կոմիտարի գործողութիւնները ժողովրդական հոծ բազմութիւնների (մասսաների) դժգոհութիւնն են չարույանում, նրանց դէմ կարելի է բողոքել Կենտրոնական Գործադիր Կոմիտէի և բանւորների, զինւորների, և կոգալների պատգամաւորների Խորհուրդների Համագումարի առաջ:

Ամբողջ Խորհրդային Իշխանութիւնը՝ ներքեից մինչև վերև, զինական Խորհրդից մինչև Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը՝ կազմուած է նոյն ինքն բանւոր ժողովրդից:

Մեր բանւոր-զինւորական կառավարութիւնը բանւոր

ժողովրդի ծառան է միայն: Ամեն մի բույն ժողովուրդը կարող է վերընտրել նրան և՛ մասամբ, և՛ ամբողջովին: Ծայրագոյն իշխանութիւնը ժողովրդի ձեռքին է Ֆուս:

Ժողովուրդն ընտրում է լաւագոյն մարդկանց և ինքն է նրանց իշխանութիւն շնորհում: Այդպիսի իշխանութեանն ամեն մի քաղաքացի պէտք է ենթարկւի ո՛չ թէ անհից, այլ խղճով: Այդպիսի իշխանութիւնը միմիայն բարբի և ամեն մէկի կամքն է կատարում: Այդպիսի իշխանութեան դէմ վեր կենալը՝ կեշանակէր ինքն իրա դէմ վեր կենալ:

Միմիայն խորհրդներին է պատկանում՝ իրանց որոշումները և կոմիտարների ու գործադիր կոմիտէների անդամների հրամանները փոփոխելու իրաւունքը: Առանձին քաղաքացիները՝ խորհուրդների իշխանութեան կարգադրութիւններին չենթարկւելու դէպքում՝ պատասխանատուութեան են կանչւում չեղափոխական դատաստանի տուայ:

Յեղափոխական ժողովուրդը պէտք է նաև չեղափոխական կարգապահութիւն ունենայ: Առանց դրան ժողովուրդը կկորցնէ իր նւանումները, որովհետև յաղթւած թշնամին քնած չէ և պատրաստ է սգուելու մեր ամեն մի սխալից, մեր ամեն մի զանցառութիւնից:

Առանց կարգապահութեան ոյժ չկայ և չի կարող լինել:

2013

« Ազգային գրադարան



NL0039209

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵԱՐԻՍ: ԿՐԹԵՎՈՒԹԵԱՄԲ
 ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Ռ. Սոց. Գեր. Խորհուրդների Հանրապետության Սահմանադրու-
 թիւնը:
- 2) Ն. ԼԵՆԻՆ. «Շամակ Ամերիկեան բանուոներին» — գինը՝ 1 ռուբ.
- 3) Վ. ՖՐԻՉԷ. «Պրոլետարական պոէզիան» — գինը՝ 2 ռ.
- 4) ԶԻԶԵՐԻՆ. «Բրեստից լետոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ
 Համագումարին) — գինը՝ 1 ռուբ.
- 5) ՆԵՐՉԱԿ. «Դէպքերը Քապոււմ, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազի
 Խորհրդային Իշխանութիւնը»:
- 6) Ն. ԼԵՆԻՆ. «Կարլ Մարքս» (Համառոտ պնասագրութիւնը և մարք-
 սիզմի շարադրութիւնը) — գինը՝ 1 ռ. 50 կ.
- 7) ՆԵՐՉԱԿ. «Տիւսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակ-
 տիկան» — գինը՝ 1 ռ.
- 8) Ն. ԲՈՒՆԻՆ. «Կոմունիստների ծրագիրը» — գինը՝ 3 ռ.
- 9) Մ. ՊԱԻՆՍԿԻ (Վելտման) «Նսիան և իր դերը համաշխարհա-
 լին պատերազմի մէջ» — գինը՝ 3 ռ.
- 10) ԿԱՐԼ ՌԱՒԵԿ. I. «Կոմունիստական Կուսակցութիւնը Գեր-
 մանիայում». II. «Կարլ Լիբկնիխտ» (Լիբկնիխտի նկարով) — գինը՝ 1 ռ.
- 11) «Խորհրդային Կառավարութեան նստան Վիլսոնին» — գինը՝ 75 կ.
- 12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը» —
 գինը՝ 2 ռուբ.
- 13) Հ. ՅՈՎՍՍԷՓԵԱՆ. «Դէպի քաղաքացիական կռիւ»:
- 14) Գ. ԶԻՆՈՎԵԻ, ԻՆ. ԿԱՄԵՆԵԻ և Լ. ՏՐՈՅԿԻ — «Ն. Լենին»
 (Վլադիմիր Իլիչ Ուլանով) — գինը՝ 2 ռ.
- 15) Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմունիստական Մանիֆեստ» —
 Պլեխանովի, Կաուցուի և հեղինակների առաջարաններով — գինը՝ 3 ռ.
- 16) Պ. ԼԱՅՆԱՐԳ Տնտեսական Էտիլոցիա և Կոմունիզմ — գինը՝ 50 կ.
- 17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ի՞նչ բան է Խորհրդային Իշխանութիւնը և ինչ-
 պէս է նա կազմուում» — գինը՝ 2 ռ.
- 18) Ֆրանսիական ՍՅԺ Յեղափոխութիւնը — գինը՝ 3 ռ.
- 19) Վ. ԿԵՐՏԵՆՅԵԻ. «Ինչպէս վարել ժողովը» — գինը՝ 2 ռ. 50 կ.

ՀԱՅՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՏՏ. ԿՈՒՍԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
 ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- 1) Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան (Բոլշևիկների)
 Ծրագիրը:
- 2) III Ինտերնացիոնալի Պլատֆորման:
- 3) Ն. ԼԵՆԻՆ. «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական գետ-
 կրատիւլի մասին» — գինը՝ 50 կոպ.
- 4) Հարաստանի Կոմունիստական Կուսակցութեան ներկայացուցչի գե-
 կուցումը III Կոմունիստական Ինտերնացիոնալին — գինը՝ 60 կոպ:
- 5) Կոմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի
 պրոլետարիատին — գինը՝ 1 ռ.
- 6) Ն. ԼԵՆԻՆ. «Երրորդ Ինտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ»
 — գինը՝ 1 ռ.
- 7) Ն. ԼԵՆԻՆ. «Ի՞նչ պէտք է լինի մեր կուսակցութեան անուճը» —
 գինը՝ 50 կ.